ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1921ԹԹ.

Առարկա՝ Պատմություն
ՈՒսուցիչ՝ Այվազյան Գևորգ
Ղեկավար՝ Հայրապետյան Արմեն

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……...……...3

ԳԼՈՒԽ 1.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1918թ……...……6

1.1 ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԵՐԵՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ……...……...……6
1.2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ…….……..12

ԳԼՈՒԽ 2.
ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ,
ԴՐԱ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 1918-1921ԹԹ…….……...17

2.1 ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ…….……17
2.2 ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՅԴ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ……..21
2.3 ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ: ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ……..32

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....40

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……42

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի սահմանների ու հարևան երկրներից որոշների հետ վիճելի տարածքների հարցը մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հիմնախնդիրներից մեկն է, որը արդարացի լուծում պահանջելով չի կորցրել իր գիտական ու արդիական նշանակությունը: Արցախյան հիմնախնդրի արդարացի լուծումը այսօր մեր նորանկախ պետականության արտաքին քաղաքական կարևորագույն հիմնախնդիրներից են, որոնց լուծումը մեզանից պահանջելու է լուրջ դիվանագիտական ջանքեր և անպայմանորեն ենթադրելու է նաև սահմանային ու տարածքային հարցերի վերանայում:

Հաշվի առնելով Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ-ի) դեմ իրականացվող թշնամական քաղաքականությունը, կնքված զինադադարի պարբերական խախտումները, ինչպես նաև դիվանագիտական ոլորտում բացահայտ հակահայ գործողությունները՝ առավել քան արդիական է դառնում 1918-1921թթ. հայ-ադրբեջանական հարաբերությունների հետազոտումը:

Ներկայումս հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը առաջնահերթ կարևորություն ունի, որին մեծապես կարող է նպաստել այն հարուստ փորձը, որ ձեռք է բերվել հայ ժողովրդի 1918-1921թթ. գոյամարտի օրերին: Իսկ այդ փորձը թելադրում է անմիջական հակահարված տալ Հայաստանի և Արցախի նկատմամբ Ադրբեջանի ամեն տեսակի ոտնձգություններին ու նկրտումներին, վճռականապես մերժել տարածքների վերադարձման անընդունելի գաղափարը:

Մեր առջև դրված **նպատակներն ու խնդիրներն** են.

- հանգամանորեն ուսումնասիրել և գիտականորեն ընդհանրացնել ադրբեջանական զավթիչների և նրանց աջակիցների դեմ հայ բնակչության 1918-1921թթ. հերոսական գոյամարտը,
- պարզաբանել հայ-ադրբեջանական հարաբերությունների էությունը,
- ներկայացնել ժամանակի գերտերությունների մոտեցումները Հարավային Կովկասի ազգային-տարածքային հարցերին,
- ըստ ամենայնի արժեքավորել հայ-ադրբեջանական հարաբերությունների պատմությանը նվիրված աշխատությունները, շեշտադրել այն հարցերը, որոնք անբավարար չափով են լուսաբանված պատմագիտական գրականության մեջ,
- գրականության, մամուլի և արխիվային փաստաթղթերի ու նյութերի լայն օգտագործմամբ քննարկել հայ-ադրբեջանական հարաբերությունների բնույթը, ցույց տալ դրանց բարդությունը, դրա շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը, ծավալված դիվանագիտական պայքարը,
- բացահայտել ՀՀ ազերի և քուրդ բնակիչների շրջանում տարված հակահայկական քարոզչության կազմակերպման և նրանց հակահայ պայքարի մեջ ներգրավելու ուղղությամբ Ադրբեջանի կառավարության ջանքերը,
- վերլուծել Արցախը, Զանգեզուրը և Նախիջևանը Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու խորհրդային իշխանությունների շահագրգռվածության դրդապատճառները,
- մեկնաբանել ՀՀ կառավարության թափած դիվանագիտական ջանքերը՝ ադրբեջանական ռազմակալումից հայկական շրջանները պաշտպանելու համար,
- կարևոր տեղ հատկացնել ՀՀ կառավարության և Արցախի, Զանգեզուրի իշխանությունների փոխհարաբերությունների վերլուծությանը:
- տալ 11-րդ կարմիր բանակի վիճելի տարածքներ ներխուժելու պատմությունը:

Աշխատանքը ժամանակագրական առումով ընդգրկում է 1918թ. մայիսից, այսինքն՝ Հայաստանի և Ադրբեջանի անկախության հռչակումից մինչև 1921թ. կեսերը, այսինքն՝ մինչև ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի նիստում հայ-ադրբեջանական հարաբերություններում եղած քաղաքական վիճակի ամրագրումը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Օգտագործված աղբյուրագիտական բազայի համառոտ տեսություն: Հայ-ադրբեջանական հարաբերությունների, Հարավային Կովկասի պետությունների անկախության շրջանի պատմության մասին կատարվել են բազմաթիվ պատմագիտական հետազոտություններ, տպագրվել են ժամանակակիցներից շատերի հուշագրությունները, լույս են տեսել այդ հարաբերությունները լուսաբանող փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, հոդվածներ, հրապարակի վրա առկա է բավականաչափ գրականություն:

Աշխատանքի շարադրման ընթացքում օգտվել ենք ՀԱԱ մի շարք ֆոնդերից, որոնք ներառում են Հայաստանի տարածքային խնդիրներին, հայ-ադրբեջանական հարաբերություններին առնչվող կամ անմիջականորեն դրանց վերաբերող բազմաթիվ նյութեր: Հետազոտության աղբյուրագիտական հիմքը կազմում են նաև տպագիր փաստաթղթերի ժողովածուները:[1] Աշխատանքի համար սկզբնաղբյուրի արժեք ունեն օգտագործված հուշագրային բնույթի հրատարակությունները:[2]

Խորհրդահայ պատմաբաններից առաջինը Բ.Բորյանն էր,[3] որը փորձել է անաչառ գնահատականներ տալ 1918-1921թթ. Անդրկովկասում ստեղծված միջազգային իրադրությանը, տարածքային-սահմանային հարցերին: Սակայն նրանից հետո պատմական անաչառությունը հասկանալի պատճառներով մղվեց հետնախորք: Խորհրդային շրջանում հրատարակված աշխատություններից կարելի է առանձնացնել նաև Մ.Արզումանյանի, Ա.Կարինյանի, Ա.Ալիխանյանի, Ս.Կարապետյանի և Ա.Եսայանի աշխատությունները:[4] Անդրկովկասյան հանրապետությունների միջև առկա միջպետական ռազմաքաղաքական և դիվանագիտական հարաբերությունները, ինչպես նաև դրանց հետ սերտորեն առնչվող սահմանա-տարածքային վեճերն արտացոլող աշխատանքներից պետք է առանձնացնել վրաց հասարակական և պետաքաղաքական գործիչ Զուրաբ Ավալովի (Ավալաշվիլու) ուշագրավ գործը, որում ըստ ամենայնի կարևորվում են միջազգային գործառույթներում

---

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., 1960: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.), պրոֆ. Ջ.Կիրակոսյանի խմբ., Եր., 1972: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (քաղաքական պատմություն), խմբ. Գ.Գալոյան, Եր., 2000: Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, Եր., 2001: Լազեան Գ., Հայաստանը եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Եր., 1991: Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., կազմողներ՝ Ս.Միրզոյան, Ա.Ղազիյան, խմբագիր՝ Ա.Վիրաբյան, Երևան, 2000: Նախիջևան-Շարուրը 1918-1921թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, №1-2: Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, т.1, М., 2008. Казанджян Р., К предистории самоопределения Нагорного Карабаха. С приложением новых документов, М., 1997. Нагорный Карабах в 1918-1923гг., отв. ред. В.А.Микаелян, Ер., 1992. Шесть лет национальной политики Советской власти и Наркомнац, 1917-1923гг., М., 1924.

[2] Լէօ, Սահմանավեճեր: Լոռի,Ախալքալաք, Ղարաբաղ, Թիֆլիս, 1919: Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968: Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, նույնի՝ Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962: Իրազէկ Յ., Մօտիկ անցեալից: Պատմական դէպքեր եւ ապրումներ. 1917-1922, Պէյրութ, 1956: Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999: Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Լօս Անճէլս, 1952: Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Եր., 2007: Жордания Н.Н., За два года (с 1 марта 1917-го-по 1 марта 1919-го). Доклады и речи. Тифлис, 1919. Жордания Н.Н., Моя жизнь. Стэнфорд, 1968.

[3] Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, Москва-Ленинград, ч.1-2, 1928-1929.

[4] Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Եր., 1973: Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրության գործում (1917-1921թթ.), Եր., 1966: Կարապետյան Ս., 1920թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետալան Ռուսաստանը, Եր., 1965: Եսայան Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965: Կարինյան Ա., Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926:

Հարավային Կովկասի պետությունների ունեցած տեղի ու խաղացած դերի, փոխառնչությունների բացահայտման հիմնախնդիրները, արժևորվում են հեղինակի կողմից արված եզրահանգումները:[5]

Առավել գնահատելի են հետխորհրդային շրջանի աշխատությունները:[6]

Հարկ է նաև նշել, որ հետազոտված հարցի մի շարք տեսանկյուններ իրենց արտացոլումն են գտել Սփյուռքի և առհասարակ արտերկրի որոշ հեղինակների կողմից հրապարակված մի շարք գործերում: Հետազոտված հիմնախնդրի առավել ամբողջական լուսաբանման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ռիչարդ Հովհաննիսյանի աշխատանքները Առաջին Հանրապետության պատմության վերաբերյալ, որում որոշ իրարամերժ հայեցակարգային մոտեցումների հետ մեկտեղ, կան բազմաթիվ դիտարժան մոտեցումներ, որոնք պատմաքննական տեսանկյունից առնչվել են հայ-ադրբեջանական, հայ-վրացական, ռազմաքաղաքական, դիվանագիտական հարաբերություններին և դրանցում առկա լուրջ բարդույթներին:[7]

[5] Авалов З., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг. Воспоминания. Очерки. Париж, 1924.

[6] Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010: Նույնի՝ 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997: Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., Եր., 2007: Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Եր., 2002: Կնյազյան Դ., Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920թթ., Եր., 2008: Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010: Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991: Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Եր., 1996: Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը (1920-1921թթ.), Եր., 2000: Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999: Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003: Мустафазаде Р., Две республики. Азербайджано-российские отношения 1918-1920гг. М., 2006.

[7] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, Եր., 2005: Նույնի՝ Հայաստանի Հանրապետություն: Հատոր II. Վերսալից-Լոնդոն, 1919-1920, Եր., 2014:

ԳԼՈՒԽ 1.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1918թ.

1.1 Անդրկովկասի երեք հանրապետությունների անկախացման գործընթացը

1917 թ. դեկտեմբերի 5-ին՝ Երզնկայի զինադադարի ստորագրումից հետո, իշխանական ճգնաժամն Անդրկովկասում թևակոխեց հերթական փուլ, որը բոլշևիկյան հեղաշրջմանը հաջորդած բուռն իրադարձությունների հետևանքն էր: Նոր իրավիճակի յուրահատկությունը պայմանավորված էր մի կողմից՝ երկրամասային իշխանության և բոլշևիկյան կենտրոնական ու տեղական ուժերի առճակատմամբ, իսկ մյուս կողմից՝ առավել կայուն իշխանության հաստատման հրամայականով: Սահմանադիր ժողովի ցրումը 1918 թ. հունվարին ավելի սրեց այդ գործընթացը, և Անդրկովկասում իշխանության խնդիրն ուղղակիորեն և բացահայտորեն առնչվեց երկրամասը Խորհրդային Ռուսաստանից վերջնականապես անջատելու, ինչպես նաև անդրկովկասյան ժողովուրդների անկախության հիմնահարցերին: Այդ հետևողական քաղաքականությունն իրականացնողը սկզբնական շրջանում Անդրկովկասի կոմիսարիատն էր, այնուհետև՝ Սեյմը: Հարկ է վերջինիս գործունեության մեջ առանձին անցումային փուլ համարել նոր կառավարության ստեղծման հիմնահարցը, որին լուծում տրվեց 1918 թ. մարտի 13 (26)-ի Սեյմի 17-րդ նիստում: Առաջնորդվելով Սեյմի ընդունած «Ծրագիր-Հռչակագրի» դրույթներով՝ մենշևիկ Ե. Գեգեչկորիի գլխավորած նորընտիր կառավարությունը ներկայացրեց իր առջև ծառացած առաջնահերթ խնդիրները, որոնցից առաջինը «կայուն հաշտության և Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների» վերականգնում էր: Ելույթ ունեցան՝ վրացիներից Դ. Օնիաշվիլին, Գ. Գեորգաձեն, Գ. Գվազավան, Իվ. Լորդ-Կիպանիձեն, Գ. Լասխիշվիլին, Ռ. Արսենիձեն, Գոբեչիան, Ա. Չխենկելին, հայերից՝ Հ. Քաջազնունին, Մ. Թումանյանը, Ալ. Խատիսյանը, թաթար-մուսուլմաններից Գ. Ռասուլ-Զադեն, Մուհամեդբեկովը, Ա. Շեյխ-Ուլ-Իսլամովը, ռուսներից՝ Յու. Սեմյոնովը, Ա. Կանտեմիրովը: Հատկապես այս նիստում կուսակցականության ու առավել ևս Սեյմի խմբակցությունների սկզբունքը հիմնականում ետին պլան էր մղվել՝ ի հաշիվ ազգային շահերի: Անդրկովկասյան Սեյմի 1918 թ. ապրիլի 9 (22)-ի 22-րդ նիստը դարձավ բեկումնային. բոլշևիկյան հեղաշրջումից ի վեր այն դարձավ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և երկրամասն անկախացնելու գլխավոր ջրբաժանը: Հայազգի պատգամավորներից ելույթներով հանդես եկան երեքը, որոնցից Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը կողմ արտահայտվեցին անկախությանը, իսկ էսէռ Լ. Թումանյանը դարձավ այս նիստի առանցքային ընդդիմախոսը: Մի քանի օր անց անկախության հռչակման ակտին իր խմբագրականը նվիրեց Ս. Վրացյանը: Նա այդ որոշումը որակում էր որպես «պատմական անհրաժեշտություն» և այն հիմնավորում հետևյալ կերպ. «Մենք ոչ միայն պաշտպանութիւն չգտանք կենտրոնի կողմից այն անհաւասար պայքարի մէջ, որ մղւում է մինչեւ այսօր արտաքին թշնամու դէմ, այլեւ ստացանք Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, դրւելով կատարված փաստի առաջ: Մենք կորցրինք մեծ պետութեան բոլոր առաւելութիւնները և, մյուս կողմից՝ ձեռք չբերինք և փոքր պետութեան համեստ միջոցները և ապահովութիւնը: Ստեղծվեց մի անտերութիւն, այսպէս ասած, անպետութիւն ... անհրաժեշտ է ստեղծել իրաւական կացութիւն»:[8] 1918 թ. ապրիլի 9 (22)-ին Անդրկովկասյան Սեյմը հռչակեց Անդրկովկասի անկախ պետությունը: Ե. Գեգեչկորիի կաբինետը փաստորեն հրաժարական տվեց:

[8] «Հորիզոն», 1918, 14 (27) ապրիլ, թիվ 79:

Հարկ է նաև նշել, որ այդ վճռական քայլն ուղեկցվում էր տագնապալի լուրերով, ինչը վկայում էր, որ գոնե երկրամասի քաղաքական կենտրոնում՝ Թիֆլիսում, սպասվում էին հակակառավարական ելույթներ: Նոր կառավարության կազմում ընդգրկվեցին. 1. նախարար-նախագահ և արտաքին գործերի նախարար՝ Ա. Ի. Չխենկելի, 2. ներքին գործերի նախարար՝ Ն. Վ. Ռամիշվիլի, 3. ֆինանսների նախարար՝ Ա. Ի. Խատիսյան, 4. հաղորդակցության ուղիների նախարար՝ Խ.-Բ. Մելիք-Ասլանով, 5. արդարադատության նախարար՝ Ֆ.-խ. Խոյսկի, 6. զինվորական նախարար՝ Գ. Տ. Գեորգաձե, 7. հողագործության նախարար Ն. Գ. Խոմերիկի, 8. ժողովրդական լուսավորության նախարար՝ Ն. Բ. Ուսուբբեկով, 9. առևտրի և արդյունաբերության նախարար՝ Մ. Գ. Հաջինսկի, 10. պարենավորման նախարար՝ Ա. Ի.Սահակյան, 11. պետական խնամատարության նախարար՝ Ռ. Ի. Քաջազնունի, 12. աշխատանքի նախարար՝ Ա. Ա. Երզնկյան, 13. պետական վերստուգիչ (վերահսկիչ)՝ Ի.-Բ. Հայդարով:[9]

Անդրկովկասյան իշխանությունները հույս ունեին, որ երկրամասի անկախության հռչակումն իրավական հիմք կտա թուրքերի հետ խաղաղ բանակցություններ վերսկսելու և շուտափույթ հաշտություն կնքելու: Սակայն 1918 թ. մայիսի 11-ին Բաթումում սկսված թուրք-անդրկովկասյան հաշտության բանակցությունները դարձյալ արդյունք չտվեցին, քանի որ թուրքերը Բրեստ-Լիտովսկի պայմանագրից շատ ավելի կողոպտիչ պահանջներ ներկայացրին և թուրք-անդրկովկասյան բանակցությունները դարձյալ մտան փակուղի: Դրան զուգահեռ թուրքական զորքերը, թույլ դիմադրության հանդիպելով, շարժվում էին Անդրկովկասի խորքերը: Բանակցությունների ձախողումը մի կողմից, թուրքերի շարունակական հարձակումը մյուս կողմից և դրան ի պատասխան՝ երկրամասը պաշտպանելու անկարողությունը Անդրկովկասյան դաշնային հանրապետությանը կանգնեցրին քաղաքական ճգնաժամի առաջ: 1918 թ. գարնանը սուր հակասություններ էին առաջացել իրեն անկախ հռչակած Անդրկովկասյան դաշնային դեմոկրատական հանրապետության թե՛ կառավարության և թե՛ խորհրդարանի (Սեյմի) ներսում: Հիմնականում վրացի, հայ և կովկասյան թուրք ազգերի ներկայացուցիչներից բաղկացած Անդրկովկասյան դաշնային իշխանության մարմիններում առկա էին ազգային-տարածքային սուր վեճեր, քաղաքական իրարամերժ կողմնորոշումներ, միջկուսակցական հակամարտություններ և այլն: Նրանց միջև չկար միասնություն պատերազմի և խաղաղության հարցում: Եթե հայերը, մասամբ նաև վրացիները թուրքական զորքերին դիմադրելու, ինքնապաշտպանվելու փորձեր էին անում, ապա ադրբեջանցիները «աներկիմաստ, ուղղակի բացահայտ հայտարարում էին, որ իրենք չեն պատերազմի Թուրքիայի հետ»:[10] Քաղաքական կողմնորոշման առումով, եթե հայերը կողմնորոշված էին դեպի Ռուսաստանը, Կովկասի մահմեդականությունը՝ միանշանակ դեպի Թուրքիա, ապա վրացիներն իրենց շահերի թելադրանքով հակվեցին դեպի Գերմանիա: Սրված տարաձայնությունների պատճառով Անդրկովկասյան դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի:[11] Ստեղծված պայմաններում առաջինը վրացիները սկսեցին ուղիներ փնտրել դուրս գալու ծանր կացությունից: Նրանք ո՛չ տրամադիր էին պատերազմել թուրքերի դեմ և ո՛չ էլ ի վիճակի էին: Դա ակներև դարձավ 1918 թ. ապրիլի 1-ին Բաթումի անկումից հետո: Վրաց–գերմանական հարաբերություններն ավելի իրական հողի վրա դրվեցին արդեն մայիսի կեսերից, երբ Վրաստանի ու Անդրկովկասի ռազմաքաղաքական վիճակն ավելի էր բարդացել: Վրաց

[9] Մելիքյան Վ., Անդրկովկասյան սեյմի քաղաքական կողմնորոշման փոփոխման հիմնահարցը և երկրամասի անկախության հռչակումը, «Հայագիտության հարցեր», Եր., 2014, №3, էջ 124:
[10] Авалов З., Независимость Грузии в международной политике 1918–1921 гг. (Воспоминания. Очерки). Париж, 1924, с. 44.
[11] Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 52:

քաղաքական ղեկավարներն իրենց երկրի փրկության հույսը կապեցին Գերմանիայի օգնության հետ: Դա համընկնում էր նաև վերջինիս շահերին, քանի որ տնտեսական, հաղորդակցության միջոցների տեսակետից Վրաստանն ուներ գրավչություն, մի բան, որ պակասում էր Հայաստանում: Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատ (մենշևիկների) առաջնորդ Ն. Ժորդանիան Գերմանիայի ներկայացուցիչներից (ֆոն Լոսով, կոմս Շուլենբուրգ, ֆոն Կրես) սկզբունքորեն երաշխիքներ ստացավ Վրաստանի անկախության և տարածքային ամբողջականության վերաբերյալ: Անել վիճակում են հայտնվում Բաթումի հայ պատվիրակները: Հայոց Ազգային խորհրդի գիտությամբ որոշում են վրացիների օրինակով ապավինել գերմանացիների հովանավորությանը: Սակայն ֆոն Լոսովը հայտնում է, որ թուրքերն իրենց չեն լսում և հայերին խորհուրդ է տալիս պատվիրակություն ուղարկել Գերմանիա: 1918 թ. մայիսի 26-ի կեսօրին (ժամը 3-ին) գումարվեց Անդրկովկասյան Սեյմի վերջին նիստը: Սոցիալ-դեմոկրատ խմբակցությունը (ղեկ. Ի. Ծերեթելի) առաջարկ մտցրեց Սեյմի արձակման և Անդրկովկասյան դաշնային հանրապետության կազմալուծման մասին: Վրաց Ազգային խուրհուրդը՝ Ն. Ժորդանիայի նախագահությամբ, նախապես ստանալով Գերմանիայի հովանավորությունը, մեծ հանդիսավորությամբ Վրաստանը հռչակեց անկախ: Մայիսի 27-ին մահմեդականների (ադրբեջանական) Ազգային խորհուրդը, հիմք ունենալով Անդրկովկաս ներխուժած իր ցեղակից Թուրքիայի անվերապահ աջակցությունն ու հովանավորությունը, հայտարարեց Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության (ԱԿՄՀ) անկախության մասին, որն, ի դեպ, հենց այդ ժամանակ թուրքերն առաջին անգամ կոչեցին «Ադրբեջան»,[12] Հայոց Ազգային խորհրդին այլ բան չէր մնում, քան կողմնորոշվել դեպի Հայաստանի անկախությունը: Մայիսի 30-ին, Հայոց ազգային խորհուրդը կատարեց վճռական քայլը՝ որոշեց հայտարարություն անել Հայաստանի անկախության մասին: Հանձնարարվեց Ն. Աղբալյանին մշակել Հայաստանի անկախության պաշտոնական հայտարարագիրը (հռչակագիրը): Հռչակագրի տեքստն ընդունվեց Հայոց ազգային խորհրդի կողմից, իսկ մայիսի 31-ին այն լույս տեսավ մամուլում:[13] 1918 թ. մայիսին անկախության հռչակումից հետո անդրկովկասյան ժողովուրդները կանգնեցին անկախության և սեփական պետականությունների կերտման պատմաքաղաքական հրամայականողության անբեկանելի փաստի առաջ, որի հետևանքով ձևավորված անդրկովկասյան հանրապետությունների միջև հարաբերություններում առաջացավ ռազմաքաղաքական մեծ լարվածություն սահմանատարածքային վիճարկելի հիմնախնդիրների շուրջ, որը վերջ ի վերջո հանգեցրեց պատերազմական բախումների և նախկին կարծեցյալ կամ ոչ կարծեցյալ բարեկամության փոխարեն սերմանվեց ազգամիջյան թշնամանք ու անվստահություն:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում «Հաշտության ու բարեկամության պայմանագիր» է կնքում մայիսի 28-ին անկախություն հռչակած Հայաստանի Հանրապետության հետ[14], ըստ որի Հայաստանին տրվում էր 12.000 քառ. կմ տարածք՝ մոտ մեկ միլիոն բնակչությամբ: Իսկ պատմության

---

[12] Նորահայտ պետական կազմավորման Ադրբեջան անվանումը պատահական չէր ընտրված: «Ադրբեջան – Ազերբայջանը» Իրան - Պարսկաստանի հյուսիսային ընդարձակ, թուրքերով բնակեցված, աշխարհագրական «Ատրոպատենա - Ատրպատական» նահանգի արաբական անվանումն է, որի հյուսիսային սահմանը Արաքս գետն է: Անցյալի և ժամանակակից մի շարք պատմաբաններ, քաղաքական գործիչներ իրենց անհամաձայնությունն ու տարակուսանքն են հայտնելայլ երկրի՝ Պարսկաստանի տեղանվանումը «սեփականաշնորհելու» իրողության վերաբերյալ և փաստարկել նման մոտեցման անհիմն լինելը: Դա էր պատճառը, որ Պարսկաստանը երկար ժամանակ չի ցանկացել ճանաչել Ադրբեջանի Հանրապետությունը և հարաբերություններ չի ունեցել նրա հետ:

[13] Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետության անկախության ուղին (Անկախության 90-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2008, №1, էջ 28:

[14] Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ. Եր., 1996, էջ 60, Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքար, Եր., 1994, էջ 33:

ասպարեզում հայտնված Արևելյան Անդրկովկասի թուրք-թաթարների պետական կազմավորումը կոչվեց «Ադրբեջան»: Նշենք, որ նման կազմավորման ստեղծման մեջ խիստ շահագրգռված էր Թուրքիան, նաև Անգլիան ու Գերմանիան: Բայց ադրբեջանական պետության ստեղծողն ու պահողը Թուրքիան էր, այդ էր ճշմարտությունը: Ապշերոնյան թերակղզին գրավիչ էր ոչ միայն նավթի հսկայական պաշարների շնորհիվ, այլև իբրև Թուրքիայի համաթուրանական երազանքի իրականացմանը նպաստող կարևոր գործոն: Իսկ թուրքական կառավարող շրջանները և նորահայտ Ադրբեջանի Հանրապետությունը ձեռք ձեռքի տված հայերին ոչնչացնելու իրենց քաղաքականությունն ամենևին չէին քողարկում: Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի արյունահեղ մարտերից հետո Թուրքիան անդրկովկասյան երեք հանրապետությունների հետ սեպարատ պայմանագրեր կնքելով, բանակի ողջ ուժերը կենտրոնացրեց Բաքվի ուղղությամբ՝ նպատակ ունենալով լուծել հետևյալ խնդիրները. տիրանալ Բաքվի նավթառատ շրջանին, անմիջական ճանապարհ բացել դեպի թուրանական աշխարհ, Բաքուն դարձնել նորահայտ ադրբեջանական հանրապետության մայրաքաղաք ու հաստատել այնտեղ այդ հանրապետության դրածո կառավարությունը, դուրս մղել Անդրկովկասից Ռուսաստանին և վերացնել այդ նպատակների իրագործմանը խոչընդոտող հայությանը: Նկատենք, որ Թուրքիայի նպատակները համահունչ էին Կայսերական Գերմանիայի շահերին: Թուրքական բանակի արշավանքին մասնակցում էին զգալի թվով գերմանական զինվորականներ: Ճանապարհին թալանելով, ավերելով, սրի ու հրի մատնելով Նուխու, Արեշի, Շամախու ու Գյոկչայի հայկական ծաղկուն բնակավայրերը, ոչնչացնելով բնիկ հայ բնակչությունը, Բաքվի պաշտպանների մոտ 3,5 ամսվա համառ ու հերոսական դիմադրությունը կոտրելուց հետո, թուրքական բանակը տեղական ավազակաբարո թաթար, քուրդ հրոսակախմբերի հետ 1918 թ. սեպտեմբերի 15–ին մտավ Բաքու: Թուրքական զինվորական իշխանությունները Բաքվի արշավանքին զուգահեռ փորձում են տիրել Ղարաբաղին: 1918 թ. սեպտեմբերի սկզբներին Աղդամում տեղակայված թուրքական զորախմբի հրամանատար Ջամիլ-Ջահիդ բեյը երկու անգամ վերջնագիր է ուղարկում Ղարաբաղի ժողովրդական կառավարությանը՝Ադրբեջանին ենթարկվելու և զինաթափվելու պահանջով: Սեպտեմբերի 21-ին Աղդամ է գալիս ոչ անհայտ Նուրի փաշան: Հայկական կողմը, խուսափելով արյունահեղությունից, սեպտեմբերի 23 -ին առերես համաձայնություն է տալիս ժամանակավորապես ենթարկվել Ադրբեջանին, զինաթափվել և սահմանափակ թվով թուրք ասկյարներ բաց թողնել Շուշի: Սեպտեմբերի 26-ին (այլ աղբյուրներում՝ 24-ին, 25-ին) Ջամիլ բեյը Գալիպոլյան դիվիզիայի 6000 ասկյարներով (այլ աղբյուրներում՝ 5000, 2000[15]) երեք զրահապատ մեքենաներով մտնում է Շուշի և տեղավորվում հայկական թաղամասում: Թուրքական բանակը Շուշիում մնում է մինչև 1918 թ. նոյեմբերի 16-ը: Ադրբեջանը, այսպիսով, թուրքական զենքի ուժով իրեն է ենթարկում Շուշին, բայց ոչ Ղարաբաղը. գավառները շարունակում են իրենց անկախ, ողբերգական փորձություններով լի կյանքը: Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց 1918 թ. աշնանը Եռյակ Միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա և Թուրքիա) լիակատար պարտությամբ: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մալթա կղզու Մուդրոս վայրում Թուրքիան ստորագրեց իր լիակատար պարտությունը հաստատող վավերագիրը, իսկ Անտանտի կողմից այն ստորագրեց Անգլիայի ներկայացուցիչը: Նոյեմբերի 13-ին խորհրդային Ռուսաստանը չեղյալ է հայտարարում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը՝ նախապես խզելով դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ: Նոյեմբերի 9-ին Կայսերական Գերմանիան ճանաչում է իր պարտությունը: Բրեստի պայմանագրի իրավական ուժը կորցրած լինելու իրողությունից են բխում 1918 թ. հունիսին

[15] Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 60, Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 33:

անդրկովկասյան հանրապետությունների հետ Թուրքիայի կնքած սեպարատ պայմանագրերը: Մուդրոսի զինադադարի համաձայնագրի հիման վրա Թուրքիան պարտավորվում է բոլոր ռազմագերիներին ու արտաքսվածներին հավաքել Կ. Պոլսում և հանձնել դաշնակիցներին, իր զորքերը դուրս բերել Անդրկովկասից: 15-րդ կետով դաշնակիցներին իրավունք է վերապահվում օկուպացնել Բաթումն ու Բաքուն և ամենակարևորը՝ դադարեցնել ռազմական գործողությունները: 1918 թ. հոկտեմբերի 31-ին Անգլիայի կառավարությունը հրահանգում է Իրաքում տեղակայված իր զորքերին գրավել Բաքուն և նրա շրջակայքի նավթային շրջանները: 1918 թ. նոյեմբերի 15-ին (այլ աղբյուրներում՝ 17-ին) Էնզելիից, որն այն օրերին դեռևս գտնվում էր Ռուսաստանի տնօրինության ներքո, նավախմբի ուղեկցությամբ Բաքու է ժամանում բրիտանական գեներալ Վ. Մ. Թոմսոնն իր շտաբով: Նրա հետ էին նաև դաշնակից երկրների՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Հյուսիսային Ամերիկայի (ԱՄՆ) ներկայացուցիչները: Դաշնակից երկրների ներկայացուցիչների մուտքը Բաքու ուրախությամբ նգոհունակությամբ է ընդունում Բաքվի քրիստոնյա բնակչությունը, մասնավորապես՝ հայերն ու ռուսները: Գեներալ Թոմսոնն ափ իջնելով, ի պատասխան Ռուսական ազգային խորհրդի ողջույնի, ընդգծում է, որ ինքը գտնվում է ռուսական հողի վրա: Հատկանշական է, որ անգլիացի գեներալը շատ չոր է պատասխանում Ադրբեջանի Հանրապետության ներկայացուցչի ողջույնին և կարգադրում է իջեցնել Ադրբեջանի Պետական դրոշը: Թոմսոնին ողջունում է նաև Բաքվի հայոց հոգևոր առաջնորդ, Բաքվի Հայոց ազգային խորհրդի պատվավոր նախագահ Բագրատ եպիսկոպոսը: Ռուսական ազգային խորհրդի անդամների հետ հանդիպման ժամանակ Գեներալ Թոմսոնը հայտնում է, որ ինքը Բաքվի գեներալ-նահանգապետն է, իր իրավասության սահմանները կընդարձակվեն ըստ հարկի և որ ինքը թույլ չի տա ազգային հակամարտության որևէ դրսևորում: Ապա ավելացնում է, քանի որ Ադրբեջան կոչված երկրում ապրում են «պետականորեն տրամադրված» երեք ժողովուրդներ՝ թաթարներ, հայեր և ռուսներ, ուստի և նրանք միասնաբար, համախորհուրդ պետք է տնօրինեն այդ հանրապետության ներքին կյանքը, մինչև Փարիզի վեհաժողովը կլուծի պատերազմի հետևանքով ծագած հարցերը: Շուտով Անտանտը ներկայացնող անգլիական զորքերը Բաթումով մտնում են Անդրկովկաս և օկուպացնում ողջ երկրամասը: Նախքան Ադրբեջանի Հանրապետության պատմության բեմում հայտնվելը, Ռուսական կայսրության վերացումից մինչև 1918 թ. մայիսը, Արցախ-Ղարաբաղը ապրել է ինքնուրույն, անկախ կյանքով, կառավարվել ժողովրդի կամքով ստեղծված ազգային կառավարության կողմից: Նորաթուխ Ադրբեջանի Հանրապետությանը ենթարկվելու բոլոր առաջարկությունները, սպառնալիքները արդյունք չեն տվել: Բաքվում տեղակայված բրիտանական զինվորական հրամանատարության քաղաքական նկրտումները Ղարաբաղի խնդրում համընկան Ադրբեջանի ազգայնական իշխանությունների շահերի հետ: Ի դեպ, անգլիացիներն առաջին անգամ Բաքու էին մտել դեռևս 1918 թ. օգոստոսին՝ քաղաքը պաշտպանող Ցենտրկասպիի բանակին օգնելու նպատակով: Մերձավոր Արևելքում գտնվող անգլիական զինված ուժերը, բացի Բաքուն գրավելուց, այլ խնդիրներ էլ ունեին, և հրամանատարությունը չի կարողացել բավարար չափով սատարել Բաքվի պաշտպաններին, իսկ այս անգամ գեներալ Թոմսոնն ադրբեջանական հանրապետության հետ միասնաբար ձեռնամուխ է լինում ըմբոստ Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկելու խնդրի իրագործմանը: գեներալ Թոմսոնը տեղյակ էր Անդրկովկասում տիրող քաղաքական, տնտեսական իրադրությանը, տեղյակ էր նաև Ղարաբաղ-Ադրբեջան հարաբերություններին: Ղարաբաղում նրա հայտնվելը պայմանավորված էր զորավար Անդրանիկի՝ Ղարաբաղի ուղղությամբ սկսած ռազմական գործողություններով: Անդրանիկի ներկայությունը Գորիսում լուրջ վտանգ էր ներկայացնում Ադրբեջանի և շրջակայքի թուրք-թաթար հրոսակախմբերի համար: Դեպի Շուշի նրա ձեռնարկած արշավանքի լուրը հասել էր Բաքու և դրդել մուսավաթական

կառավարությանը դիմել բրիտանական գեներալին՝ կանխելու զորավարի առաջխաղացումը: Անդրանիկը նոյեմբերի սկզբին վերջապես տեղի տալով Ղարաբաղի զինվորական հրամանատարության, հայ բնակչության խնդրանքին, վճռել էր գրավել Շուշին, այնուհետև օգնել ղարաբաղցիներին՝ ազատվելու թուրքերի ներկայությունից: Զաբուղի ձորում մի շարք մարտեր մղելով և կոտրելով թշնամու համառ դիմադրությունը՝ նոյեմբերի կեսերին զորավարն իր հարվածային ջոկատով ու վերջինիս միացած տեղի կամավորներով գտնվում էր Շուշուց 20–25 կմ հեռավորության վրա: Թոմսոնը նոյեմբերի 26 թվակիր հեռագրում հայտնում է, որ շուտով հայ զորավարին հանդիպելու համար Շուշի է ուղարկելու բրիտանական մի սպայի և Անդրանիկից պահանջում է անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները թուրքերի դեմ: Այն միաժամանակ սպառնալիք է պարունակում զորավարի հասցեին. եթե նա չենթարկվի կարգադրություններին, անձամբ պատասխանատվություն է կրելու հետևանքների համար: Այս կերպ սկսվեց դաշնակիցների՝ անգլիացիների գործունեությունը Ղարաբաղում: Զորավարը պատասխանում է Թոմսոնին և ըստ ամենայնի պատճառաբանում իր ռազմական գործողությունների նպատակը. կասեցնել այն բռնարարքները, սպանությունները, որոնց ենթարկվում են հայերը Զաբուղի ձորը գրված թուրք-թաթարների կողմից: Թոմսոնի առաքելության ներկայացուցիչները՝ անգլիացի կապիտան Գոլդսմիտը և ֆրանսիացի կապիտան Պասֆելդը (Կասֆելդը) 1918 թ. դեկտեմբերի 2-ին Գորիսում այցելում են Անդրանիկին և հանձնում նրան վերոհիշյալ հեռագրից հայտնի բովանդակությամբ նամակ: Ղարաբաղցիները փորձում են կանխել բանագնացների հանդիպումը զորավարի հետ, սակայն նրանց ջանքերը հաջողությամբ չեն պսակվում: Անգլիացիներին հաջողվում է արգելել Անդրանիկի մուտքը Ղարաբաղ: Նոյեմբերի 29-ին (դեկտեմբերի 12-ին) Շուշի է ժամանում անգլիական բանակի մայոր Գիբբոնը՝ գաղթականների խնդիրներին մոտիկից ծանոթանալու համար: Մինչ Գիբբոնը ծանոթանում էր գաղթականության դրությանը, Ղարաբաղի զինվորական հրամանատարները, ազգային հասարակական գործիչները խորհրդակցություններ էին գումարում, թե ինչպես ձևավորեն, ստեղծեն այնպիսի քաղաքացիական մի մարմին, որն ի զորու լինի հարաբերություն հաստատել ու պահպանել «օտար ուժերի» հետ: Որոշում է կայացվում ստեղծել ժամանակավոր Ազգային խորհուրդ, որը նախքան Ղարաբաղի վերաբերյալ հարցերն անգլիական միսիային ներկայացնելը, քննարկեր և մի ընդհանուր, միակամ եզրակացության գար: Թեև Մուդրոսի զինադադարի համաձայնագրի պայմաններով թուրքական զորքը պետք է դուրս գար Անդրկովկասից, սակայն իրականությունն այլ էր: Ռազմական գործողությունները դադարեցնելու հրահանգով Ղարաբաղի հրամանատարությանն էր դիմել Անդրանիկը: Հայկական կողմը ենթարկվել էր հրահանգին: Այդ պարագայում, սակայն, Ղարաբաղի գյուղերը պարբերաբար հարձակման էին ենթարկվում թուրք ասկյարներից ու տեղի թուրքերից բաղկացած հրոսակախմբերի կողմից, որոնք կազմակերպվում, զինվում էին թուրք բարձրաստիճան զինվորականների անմիջական հրամանատարությամբ ու միջոցներով: Ավազակային հարձակումները կատարվում էին օրը ցերեկով, անգլիական միսիայի աչքի առաջ, և վերջինս բացարձակապես ոչ մի միջոց չէր ձեռնարկում: Նրա ներկայացուցիչը, ոչ առանց Թոմսոնի գիտության, հայտարարում էր, թե ինքը իրավունք չունի խառնվելու Ադրբեջանի ներքին գործերին. իր խնդիրը գաղթականների կարիքները հոգալն է, նրանց օգնություն կազմակերպելը: Դեկտեմբերին տեղի ունեցած դեպքերն Ազգային խորհրդի անդամների մեջ կասկածներ են առաջացնում, հավատը անգլիացիների առաքելության հանդեպ խարխլվում է: Շատ շուտով, դեկտեմբերի 23-ին կապիտան Սերրայդը Ազգային խորհրդին հայտնում է Թոմսոնի հրամանը՝

մինչև Փարիզի խաղաղարար կոնֆերանսում հարցի լուծումը Ղարաբաղը ժամանակավորապես Ադրբեջանին ենթարկելու մասին:[16]

1.2 Հայաստանի առաջին հանրապետությունը եվ նրա տարածքային հիմնախնդիրները

Պետականության հռչակման պահից Հայաստանի Հանրապետությանը լուրջ փորձություններ էին սպասվում հարևանների հետ հարաբերություններում: Պարսկաստանը միակ հարևանն էր, որի հետ սահմանների հարցում տարաձայնություններ չկային: Ուստի ի սկզբանե նրա հետ հաստատվեցին բարիդրացիական և առևտրական հարաբերություններ, թեև Նախիջևանի թուրք բնակչության ապստամբ կեցվածքի պատճառով բնականոն երկաթուղային կապ երկու երկրների միջև այդպես էլ չհաստատվեց:

Թուրքիայի, Ադրբեջանի և Նախիջևանի թրքության կողմից Հայաստանի շրջափակման պայմաններում արտաքին աշխարհի, հատկապես Եվրոպայի ու Ռուսաստանի հետ կապ հաստատելու գործում Հայաստանի համար կենսական նշանակություն էր ստանում Վրաստանով անցնող ճանապարհը: Այս առումով Վրաստանի դեմոկրատական հանրապետության հետ լավ հարաբերությունների հաստատումը անհրաժեշտություն էր: Սակայն անկախության առաջին ամիսներին երկու երկրների հարաբերությունները խիստ լարված էին: Առանցքային հակասությունը սահմանների խնդիրն էր: Առաջնորդվելով Վրաստանի համար «ռազմավարական սահմաններ» ստեղծելու անհրաժեշտությամբ՝ Վրաստանի ղեկավարները հավակնություններ էին ներկայացնում Ախալքալաքի և Լոռու գերազանցապես հայաբնակ գավառների նկատմամբ: Ըստ որում Մուդրոսի զինադադարից հետո վրացիներն իրենց դիրքորոշումը բացատրում էին նրանով, որ Թուրքիայի պարտությունից հետո Հայաստանը կստանա Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթները և տարածքի կարիք չի ունենա: Մինչդեռ սահմանագծման հարցում առաջնորդվելով ազգագրական սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետությունը նշված գավառները համարում էր իր տարածքի անբաժանելի մասը:

Ադրբեջանի հետ հենց սկզբից Հայաստանի Հանրապետության հարաբերությունները եղան բարդ ու ոչ բարեկամական: Չնայած դրանք որոշվում էին աշխարհաքաղաքական, ազգային, կրոնական, սահմանային և այլ գործոններով՝ այնուհանդերձ առանցքայինը տարածքային հարցերն էին: Ադրբեջանը հավակնություններ ներկայացրեց գերազանցապես հայաբնակ Ղարաբաղի, Զանգեզուրի, Ղազախի սահմանային գավառների, ինչպես նաև անվիճելիորեն Հայաստանին պատկանող Շարուրի, Նախիջևանի և մահմեդական բնակչություն ունեցող այլ տարածքների նկատմամբ: Իր հերթին Հայաստանի Հանրապետությունը չճանաչեց Ադրբեջանի այդ նկրտումները: Կողմ լինելով հարևանների հետ վիճելի հարցերը փոխհամաձայնությամբ և բանակցությունների միջոցով կարգավորելուն՝ Հայաստանը նման կարգավորման համար հիմք էր ընդունում ազգագրական սկզբունքը: Մինչդեռ Ադրբեջանը շեշտը դնում էր տնտեսական, աշխարհագրական և այլ գործոնների վրա: Հատկապես պայքարը սուր էր Զանգեզուրի և Ղարաբաղի համար: Այդ տարածքները ոչ միայն հայրենիքի մաս էին, այլև նրա կենսունակ գոյության երաշխիք: Երկու կողմն էլ հասկանում էին հիշյալ տարածքների իրական նշանակությունը, որը և անզիջում էր դարձնում պայքարը: Ղարաբաղում և Զանգեզուրում

[16] Աբրահամյան Լ., Ռազմաքաղաքական իրադրությունը Բաքվում և Ղարաբաղում 1918թ. երկրորդ կեսին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2006, №1, էջ 228-229:

կատարվող իրադարձություններն անմիջականորեն ազդում էին երկու երկրների փոխհարաբերությունների վրա՝ ժամանակ առ ժամանակ սպառնալով վերածվել ուղղակի պատերազմի: Ըստ որում Ադրբեջանն օգտագործում էր տնտեսական, ռազմական ու դիվանագիտական ճնշման բոլոր լծակները: Հայաստանի համար փակ էին Ադրբեջանով անցնող բոլոր ճանապարհները: Ադրբեջանը հրաժարվում էր նավթ և հաց մատակարարել Հայաստանին՝ հուսալով նման ճնշմամբ զիջումներ կորզել Ղարաբաղի և Զանգեզուրի հարցում: Ադրբեջանի ռազմական ճնշումը դրսևորվում էր ոչ միայն սահմանային գավառներում ուժի բացահայտ ցուցադրմամբ և Ղարաբաղի ու Զանգեզուրի վրա պարբերական հարձակման փորձերով, այլևս, ինչպես ասվեց, Հայաստանի մահմեդական բնակչության շրջանում քայքայիչ գործունեության ծավալմամբ և թուրք-թաթարական նորանոր խռովությունների կազմակերպմամբ:[17]

1917թ. Ռուսական կայսրության փլուզումը և 1918թ. Անդրկովկասյան սեյմի լուծարումը պայմաններ ստեղծեցին 1918թ. մայիսի 28-ին, այսպես կոչված, Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (ԱԴՀ) հռչակման համար: Հայաստանի առաջին Հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում հայ ժողովրդի դեմ գործել են՝ ճակատում թուրք-ադրբեջանական բանակները, թիկունքում՝ երիտթուրքերն ու քեմալամուսավաթականները: ԱԴՀ հռչակումը Մեծ Թուրանի նախագծի մի մասն էր:

Ադրբեջանի ստեղծման գաղափարը կազմել է պանթուրքիզմի բաղկացուցիչ մասը և մշտապես առանցքային դեր է ունեցել: 1917թ. ապրիլ-օգոստոս ամիսներին Բաքվում տեղի ունեցած Կովկասի մահմեդականների առաջին, երկրորդ և երրորդ կոնգրեսներում ընդունվեցին պանթուրքիստական որոշումներ: Դա պատահական չէր, քանզի Անդրկովկասում պանթուրքիզմի ջատագովը և անմիջական իրականացնողը մուսավաթն էր,[18] որի հետ թուրքական կառավարող շրջանակները և քաղաքական գործիչները մեծ հույսեր էին կապում: Անգամ Բաքվում գործել է պանիսլամական գլխավոր շտաբ: Անդրկովկասի՝ թաթարներով բնակեցված տարածքները կարևոր հենարան էին նրանց պաշտոնական գաղափարախոսության և քաղաքականության տարածման համար:

1918թ. գարնանը թուրքական բանակի՝ Անդրկովկաս ներխուժումով սկիզբ դրվեց Անդրկովկասում թուրքական պետության ստեղծմանը: 1918թ. մայիսի 27-ին Նուրի փաշան[19] մեծաքանակ զորքով գտնվում էր Գյանջայում, որտեղ էլ հաջորդ օրը հռչակվեց Ադրբեջանի անկախությունը: 1918թ. մայիսի 28-ին ԱԴՀ-ի հռչակումից հետո ստեղծվում է առաջին կառավարությունը, որի կառուցվածքում ընդգրկվում է նաև ռազմական նախարարությունը: Ռազմական առաջին նախարար է նշանակվում Խոսրով բեկ Սուլթանովը, որը պաշտոնավարում է մեկ ամսից ոչ ավելի՝ մինչև հունիսի կեսերը, իսկ հունիսից մինչև նոյեմբեր ռազմական նախարար չի եղել, քանզի Թուրքիան զորացրել և իր բանակներին էր միացրել ադրբեջանական զորամասերը, որոնք սկսել էին ենթարկվել թուրքական շտաբին: 1918թ. նոյեմբերից ռազմական նախարարներ են եղել Ֆաթալի խան Խոյսկին և ռուսական բանակի հրետանու գեներալ Ալի բեյ Մեհմանդարովը: Ռազմական նախարարության առջև խնդիր էր դրվել ստեղծել 25 հազարանոց ազգային բանակ: Պետական բյուջեի ավելի քաբ 24 տոկոսը հատկացվում է ռազմական ծախսերին: Անկախության հռչակագրում ԱԴՀ-ի տարածքներ են հայտարարվում Արևելյան և Հարավային Անդրկովկասները, որով նա փորձ էր Թուրքիայի հետ ուղիղ տարածքային կապն ապահովել Հայաստանի հաշվին:

---

[17] Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Եր., 2012, 562-563:
[18] Ադրբեջանական մուսավաթական կուսակցությունը, ստեղծված 1911թ.:
[19] Թուրք զորահրամանատար, Կովկասի իսլամական բանակի գեներալ:

ԱԴՀ հռչակման պահին արդեն Ադրբեջանում հսկայական բանակ կար՝ ի դեմս Կովկասի իսլամական բանակի և 1917թ. դեկտեմբերի 11-ին ձևավորված Անդրկովկասի մուսուլմանական կորպուսի, որոնց հիման վրա էլ սկսեց ձևավորվել ադրբեջանական բանակը: Անկախության հռչակումից ամիջապես հետո ԱԴՀ ղեկավարներն սկսեցին Թուրքիայի հետ բանակցություններ վարել՝ հատկապես ռազմական բնագավառում օժանդակություն ստանալու ակնկալիքով: ԱԴՀ հիմնադիրներից Մամեդ Ռասուլզադեն հանդիպում ունեցավ Էնվեր և Թալեաթ փաշաների հետ, որից հետո՝ 1918թ. հունիսի 4-ին, Ադրբեջանը և Թուրքիան կնքեցին խաղաղության և բարեկամության համաձայնագիր: Համաձայնագրի 4-րդ կետով Թուրքիան պետք է ռազմական օժանդակություն ցույց տար Ադրբեջանին, իսկ ԱԴՀ-ն պարտավորվում էր երկրից վտարել Թուրքիայի հետ պատերազմող երկրների բոլոր սպաներին ու պաշտոնյաներին, ԱԴՀ սահմանամերձ տարածքներից՝ զինված խմբավորումները: Պայմանագրի կնքումից հետո ադրբեջանական բանակն ակտիվորեն սկսեց համալրվել թուրքական արտադրության զենք-զինամթերքով, համազգեստով, իսկ Գյանջայում թուրքերի օժանդակությամբ բացվեց սպայական դպրոց, որտեղ սկսեցին դասավանդել թուրք հրահանգիչները:

Նորաստեղծ այս պետության գոյության հատկապես առաջին շրջանը (1918թ. հունիս-հոկտեմբեր) բնութագրվում է օսմանյան գաղափարների բացարձակ գերակայությամբ, ուստի Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը մեծ մասամբ պայմանավորվում էր Օսմանյան Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակա նպատակներով ու կազմում էր նրա բաղկացուցիչ մասը: Վերոգրյալի վառ ապացույցը ԱԴՀ ներքին գործերի նախարար Բեբուդ Ջևանշիրի խոսքերն են. «Սա սրբազան պատերազմ է (խոսքը 1918թ. Արցախի նկատմամբ ունեցած հավակնությունների մասին է), որի նպատակը միասնական թուրք ազգի բոլոր ճյուղերի միավորումն է: Այս նպատակի համար հայ ազգի ոչնչացումը բացարձակապես կարևոր է: Հայերը մեր քաղաքականության հաջողության ճանապարհին միակ խոչընդոտն են: Իսկ այս քաղաքականությունը մեզ դեպի Հնդկաստան ճանապարհ է բացելու: Մենք պետք է բնաջնջենք հայերին և նրանց դիակների վրայով առաջ ընթանանք մեր ուղիով: Հետևաբար, ոչ մեկին մի՛ խղճացեք և խստորեն կատարեք այն, ինչ ձեզ հրամայված է»:[20]

Թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական «մերձեցումից» հետո երկու երկրների կառավարող շրջանակները խնդիր դրեցին գրավել Բաքուն, որն այդ ժամանակ ԱԴՀ մաս չէր կազմում, պետության մայրաքաղաքը Գյանջան էր: 1918թ. սեպտեմբերի 15-ին թուրք-թաթարական զորքերը գրավեցին Բաքուն: Նույն օրն էլ սկսվեց Բաքվի հայության կոտորածը, ինչին զոհ գնացին 30 հազար հայեր: Բաքվի գրավումից հետո ԱԴՀ ղեկավարությունը, Թուրքիայի հորդորով, տարածքային պահանջներ ներկայացրեց Անդրկովկասի հայկական զգալի տարածքների (Կարս, Ղարաբաղ, Զանգեզուր, Շարուր-Նախիջևան, Բեյուկ-Վեդի, Զոդ-Բասարգեչար, Զանգիբասար և այլն) նկատմամբ: Թուրքիայի ու Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարներն առավել կարևորում էին Ղարաբաղի ու Զանգեզուրի բռնակցումը (այդ ժամանակ էր, որ ռազմական նախարար Խոսրով Բեկ Սուլթանովը նշանակվեց Ղարաբաղի և Զանգեզուրի գեներալ-նահանգապետ), քանզի այդ տարածքները ոչ միայն կարող էին ուղիղ գծով միմյանց կապել Ադրբեջանն ու Թուրքիան, այլև ԱԴՀ համար հեշտացնել իշխանության տարածումը Շարուր-Նախիջևանի և Արարատյան դաշտավայրի՝ մահմեդականներով բնակեցված լայնարձակ

[20] Դավիթավյան Տ., Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության հատուկ ծառայությունները և դրանց գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության դեմ (1918-1920), «21-րդ դար», Եր., 2014, №4, էջ 54:

տարածքների վրա: Ադրբեջանը ցանկանում էր Ղարաբաղ-Զանգեզուր-Շարուր-Նախիջևան-Մակու գծով անմիջական կապ հաստատել Թուրքիայի հետ: Դա էլ բավական չէր. Ադրբեջանը հավակնություններ ուներ անգամ Երևանի նկատմամբ՝ պնդելով, թե այն թաթարական քաղաք է՝ հայերին «վեհանձնորեն» որպես մայրաքաղաք թողնելով Էջմիածինը: Թուրքիայի հետ կապվելու համար Ադրբեջանը Հայաստանից պահանջում էր ամբողջ Ելիզավետպոլի նահանգը՝ բովանդակ Արցախով և Զանգեզուրով, Երևանի նահանգից՝ Նախիջևանն ու Շարուրը, Երևանի և Էջմիածնի գավառներից՝ Սադարակի, Վեդիբասարի, Զանգիբասարի շրջանները, Արաքսի աջ ափը, Մասիսի ստորոտներով՝ամբողջ Սուրմալուն մինչև Կարսի մարզը, ինչպես նաև Սևանա լճի հյուսիսային ափերը, Վարդենիսը: Դա կազմում էր ավելի քանի 50520 քառակուսի կմ տարածք: Թուրքիայի և Ադրբեջանի հիմնական պանթուրքիստական նպատակն էր ամբողջ Կովկասի գրավումն ու թրքացումը, ինչին հասնելն այնքան էլ դյուրին չէր:

Հայկական տարածքների նկատմամբ ունեցած իրենց նկրտումներն իրագործելու քայլերը թուրք-թաթարները ձեռնարկեցին Բաքվի գրավումից անմիջապես հետո, երբ նրանց համատեղ զորքերը շարժեցին դեպի Ղարաբաղ՝ վերջնագիր ներկայացնելով հպատակվել ԱԴՀ-ին, զինաթափվել և թուրքական բանակը ներս թողնել Շուշի: 1918թ. հոկտեմբերի 8-ին թուրքական երկրորդ դիվիզիան ԱԴՀ կառավարության ներկայացուցիչ: Ադիլխան Զիյադխանովի ուղեկցությամբ մտավ Շուշի: Նույն ամսին Կարաբեքիր փաշան մտավ Նախիջևան: Թուրքիայի ռազմական պլանների մեջ էր մտնում գրավել Շուշին և, այն դարձնելով պլացդարմ, ամբողջ Լեռնային Ղարաբաղը ենթարկել Ադրբեջանին: Այնուհետև թուրք-ադրբեջանական ուժերը մտածում էին զինաթափ անել Գանձակի լեռնային մասի հայկական գյուղերը և ապա, հավաքագրելով Մուղանի, Ազարա գետի հովտի, Նախիջևանի և այլ մահմեդական վայրերի բազմահազար զինված հրոսակներին, գրոհել Զանգեզուրի ու Դարալագյազի վրա:

Զանգեզուրի հարցում ևս Ադրբեջանին թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական աջակցություն էր ցույց տալիս Թուրքիան: Ադրբեջանի ղեկավարությունը գաղտնի Զանգեզուր էր ուղարկել թուրք սպաների ու ասկյարների, որ կազմակերպեն տեղի մուսուլմաններին ընդդեմ ՀՀ իշխանությունների, որոնք դեպի Զանգեզուր կազմակերպվող հարձակման ժամանակ թիկունքում պետք է միանային թուրք-ադրբեջանական զորքերին՝ բարձրացնելով ապստամբություն: Այդ նպատակով Ադրբեջանը նաև զինում էր տեղի մահմեդական բնակչությանը և մեծ գումարներ փոխանցում նրանց՝ Երևանում գործող իրենց դիվանագիտական ներկայացուցչության միջոցով, ինչպես նաև իրականացնում հետախուզական մեծ աշխատանք: Հաջողության դեպքում վերոնշյալ երկու շրջանները ևս պետք է միացվեին Ադրբեջանին: Դա թուրքերի և մուսավաթական ղեկավարների պանթուրքական ծրագրի մի կարևոր մասն էր, որ նրանք աշխատեցին իրագործել ամեն կերպ, նույնիսկ 1919թ., երբ Անդրկովկասում նստած էին Անտանտի հաղթական ներկայացուցիչները՝ անգլիացների գլխավորությամբ:

Այսպիսով, օսմանցիները և նրանց ադրբեջանցի կամակատարները նպատակ ունեին զավթել հյուսիս-արևելյան Հայաստանի գոյության համար կարևորագույն նշանակություն ունեցող հայկական տարածքները: Բաքվի արյունալի դեպքերից հետո նախապատրաստվեցին և իրագործվեցին Գանձակ, Շամախի, Նուխի քաղաքների և Ադրբեջանի հայկական գյուղերի հայության կոտորածները: Միայն Ելիզավետպոլի գավառում այրվեցին 13 հայկական գյուղեր, որոնց բնակչության մի մասն անողոք հոշոտվեց, իսկ կենդանի մնացածները տեղահանվեցին: Ծանր կացություն էր ստեղծվել նաև Նուխիի, Արեշի, Շամախու գավառներում, Ասկերանում, Աղդամում:

Թուրք-ադրբեջանական ռազմական, քաղաքականու ու տնտեսական դաշինքն առավել ամուր հիմքերի վրա դնելու և հարաբերություններին իրավական ուժ տալու նպատակով 1919թ հոկտեմբերի 29-ին կնքվեց գաղտնի համաձայնագիր՝ «Թուրք-ադրբեջանական ռազմական միություն» անվամբ, որի 10-րդ հոդվածի «բ» կետով Ադրբեջանն առանց Թուրքիայի թույլտվության այլ պետությունների հետ հարաբերվելու իրավունք չուներ: Դա համատեղ պաշտպանության, ռազմական համագործակցության և ռազմական միություն ստեղծելու երկկողմ պայմանագիր էր՝ ուղղված Հայաստանի և հայ ժողովրդի դեմ:

Չնայած հայ-ադրբեջանական հակասություններին ու հակամարտությանը, Բաքվում գործում էր Հայաստանի դիվանագիտական առաքելությունը, իսկ Երևանում՝ Ադրբեջանինը, այսինքն՝ երկու երկրները միմյանց մայրաքաղաքներում ներկայացված էին դեսպանների մակարդակով: Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը Աբդուռաման բեկ Հախվերդովն էր, նրա տեղակալ-խորհրդականը՝ Աղա Սալահ Մուսաևը: Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը ՀՅԴ-ական Տիգրան Բեկզադյանն էր (Շուշիից)՝ ականավոր բոլշևիկ Ալեքսանդր Բեկզադյանի եղբայրը, ապա՝ Մարտիրոս Հարությունյանը:

1919թ. Ադրբեջանի կոալիցիոն կառավարության կազմում, նախարարներից երկուսը ազգությամբ հայ էին՝ Խորեն Համասփյուռը (առանց պորտֆելի) ու Աբրահամ Դաստակյանը (Դաստակով) (առողջապահության նախարար): Երկուսն էլ ներկայացրել են ՀՅԴ-ն: ՀՀ կառավարությունների կազմում ադրբեջանցի, այն օրերի բառապաշարով՝ թաթար կամ մուսուլման նախարար չի եղել: Հողահավաքման քաղաքականության, ՀՀ տարածքային ամբողջականության նկատմամբ ունեցած ոտնձգությունների և հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին ՀՅԴ կուսակցության այն ժամանակվա պատասխանատու մարմնի ներկայացուցիչ Ա. Գյուլխանդան-յանը գրել է. «Թէեւ արտաքնապէս պահւում էին բարեկամական յարաբերութիւններ (Հայաստանի և Ադրբեջանի միջև) եւ այդ երկու երկիրները միմեանց մօտ ներկայացուցիչներ ունէին, սակայն Ադրբեջանի կառավարութիւնը ամէն ճիգ էր գործադրում, որպէսզի Հայաստանի մէջ մահմետական տարրերը չենթարկուեն հայկական կառավարութեանը: Եւ այդ նպատակով Ադրբեջանը աջակցում էր նրանց զէնքով, զինուորական ղեկավարներով, մանաւանդ դրամով»:

ԳԼՈՒԽ 2.
ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ, ԴՐԱ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 1918-1921ԹԹ>

2.1 Ղարաբաղյան հարցի առաջացումը

Ղարաբաղյան հարցը ծագել է Ռուսական կայսրության փլուզման և Հարավային Կովկասում (Անդրկովկասում) ազգային պետությունների ձևավորման ժամանակաշրջանում: Նրա հիմքում ընկած էր ֆիզիկական բնաջնջման մշտական վտանգից ազատվելու նպատակով ինքնորոշվելու և միասնական հայկական պետության մեջ վերամիավորվելու ձգտումը:

1918թ. մայիսին Թուրքիան սեփական օրինակով աշխատում էր արհեստածին՝ ցեղասպան վտանգներով լի օղուզ-թաթարական ավազակապետությանը կենդանություն տալ՝ ի հաշիվ զավթումների: Ի կատարումն համաթուրանական ծրագրի՝ Իրանական Ադրբեջանը նույնպես զավթելու նպատակով, վերցվեց նրա անվանումը և տրվեց մերձկասպյան տարածքում ստեղծվող խամաճիկային պետական կազմավորմանը:[21] Իրանի պաշտոնական շրջանակները բողոք ներկայացրին Թուրքիային այդ արհեստածին նորակազմ քաղաքական կազմավորումն «Ադրբեջան» անվանակոչելու կապակցությամբ:[22]

Սակայն նախքան Անդրկովկասյան Սեյմի փլուզումը ադրբեջանական կուսակցությունների ներկայացուցիչները գաղտնի պատվիրակություն ուղարկեցին Ստամբուլ՝ «երկրորդ թուրքական պետության» հռչակման հարցում աջակցություն ստանալու նպատակով երիտթուրքերի հետ բանակցելու համար: Երիտթուրքերի առաջնորդների հետ հանդիպման ընթացքում երկու կողմերը պայմանավորվեցին համագործակցության հետագա ծրագրերի մասին, մասնավորապես, թուրքական զինվորականների կողմից ապագա Ադրբեջանի զինված ուժերի ստեղծմանն օժանդակելու, նրանց ֆինանսավորելու և տեղացի թյուրքական բնակչության կողմից թուրքական զորքերին աջակցելու վերաբերյալ:

1918 թ. մայիսի վերջին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության առաջին մայրաքաղաք դարձած Գյանջա (Գանձակ) մտան թուրքական 5-րդ դիվիզիայի առաջապահ զորամասերը, իսկ մյուս օրը Թավրիզից այնտեղ տեղափոխվեց թուրքական գեներալ Նուրի փաշան, ով անհապաղ ձեռնամուխ եղավ Կովկասյան իսլամական բանակի կազմավորմանը: Նրա կազմի մեջ մտան թուրքական բանակի Կովկասյան 5-րդ և Չանաքկալեի 15-րդ դիվիզիաները, ինչպես նաև այն ժամանակ արդեն Ադրբեջանական վերանվանված նախկին ցարական բանակի Մահմեդական կորպուսի զորամասերը: Նուրի Փաշայի հրամանատարությամբ Կովկասյան իսլամական բանակը ձեռնամուխ եղավ ադրբեջանական իշխանության հաստատմանն այն վայրերում, որոնց հավակնում էր Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը:

Նախկինում երբեք պետականություն չունեցած Ադրբեջանը[23] հավակնություններ ներկայացրեց ոչ միայն կոմպակտ բնակվող մահմեդական բնակչություն ունեցող տարածքների,

---

[21] Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Թ, Եր., 2001, էջ 685: Բալայան Վ., Արցախի պատմություն, Եր., 2002, էջ 297:

[22] Galichian R., The Invention of History, London-Yerevan, 2009, p. 2.

[23] Անկախության հռչակման պահին ԱԴՀ-ն վերահսկում էր միայն իր հավակնած տարածքների մի մասը. Բաքուն և Բաքվի նահանգը գտնվում էին բոլշևիկների իշխանության տակ, իսկ Ելիզավետպոլի նահանգի լեռնային շրջանները իր կոմպակտ բնակվող հայ բնակչությամբ կառավարվում էին տեղական ազգային խորհուրդների կողմից: Декларация народного правительства Карабаха. Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Ер., 1992. с.13-15.

այլև բացառապես հայերով բնակեցված շրջանների նկատմամբ: Դրանց մեջ Արցախը (Ղարաբաղը) հատուկ նշանակություն ուներ, քանի որ տարածաշրջանում ռազմավարական դիրք էր զբաղեցնում և «կախված նրանից, թե ով էր այն վերահսկում, Լեռնային Ղարաբաղը կարող էր դառնալ կա՛մ միջանցք, կա՛մ պատնեշ՝ Արևելյան Անդրկովկասի մահմեդականների և Թուրքիայի միջև»:

Այն պայմաններում, երբ Հայաստանին պարտադրվեց Բաթումի պայմանագիրը, որը Օսմանյան կայսրությունից կախյալ վիճակի մեջ դրեց նրան, Լեռնային Ղարաբաղը կարող էր ապավինել միայն սեփական ուժերին: 1918 թ. հուլիսի 22-ին գումարվեց Ղարաբաղի հայերի առաջին համագումարը, որը Ղարաբաղը հռչակեց ինքնուրույն վարչական ու քաղաքական միավոր և կազմեց կառավարություն: 1918 թ. հուլիսի 24-ին ընդունվեց կառավարության Հռչակագիրը, որտեղ ներկայացվում էին նոր կազմավորված պետական իշխանության նպատակներն ու խնդիրները: Հռչակագրում ընդգծվում էր բարեկամական վերաբերմունքն այլ ժողովուրդների դեմոկրատական ուժերի նկատմամբ և հռչակվում ազգերի ինքնորոշման իրավունքը՝ որպես Ղարաբաղի կառավարության գործունեության մեկնակետ: Բնակչությանն արտաքին վտանգից պաշտպանելու համար ստեղծվեցին ինքնապաշտպանական ուժեր:

1918 թ. սեպտեմբերի 15-ին Կովկասյան իսլամական բանակի կողմից Բաքվի գրավումից անմիջապես հետո, որին հետևեց հայկական բնակչության կոտորածը, ադրբեջանական կառավարությունը թուրքական զորքերի օգնությամբ փորձեց իրեն ենթարկել Ղարաբաղը և ընդգրկել այն Ադրբեջանի կազմում: Այդ նպատակով թուրք գնդապետ Ջամիլ Ջավիդ Բեյի գլխավորությամբ թուրքական զորամասերից ձևավորվեց Ադրբեջանական առաջին դիվիզիան (Կովկասյան մահմեդական), որը սեպտեմբերի վերջին գրավեց Շուշին: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին Վրաստանում ՀՀ հավատարմատարը 1918թ. սեպտեմբերի 25-ի գրությամբ հայտնում էր. «Բաքվի անկումից հետո համառ լուրեր էին պտտվում այն մասին, որ Ադրբեջանը և թուրք հրամանատարությունը իրենց հերթական խնդիրն են դարձրել Ղարաբաղն (Արցախ) ընկճելը»:[24] Սակայն ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղի խորքերը՝ Վարանդա և Խաչեն, դեպի Ջրաբերդ և Մարտակերտ տեղափոխելու թուրքական զորքերի փորձերը կասեցվեցին տեղի հայկական ինքնապաշտպանական ջոկատների կողմից և ավարտվեցին լիակատար ձախողմամբ: Ալ.Խատիսյանը Արցախահայության հերոսականության մասին գրել է, որ գերմանա-թուրքական ուժերն Անդրկովկաս արշավելիս օժանդակություն էին ստանում «Ադրբեջանի» զորամասերից, սակայն Արցախը նվաճելու նրանց բոլոր ջանքերը փշրվեցին հայության հերոսական դիմադրության շնորհիվ:[25]

Առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրելուց հետո Օսմանյան կայսրությունը շուտով հարկադրված էր Մուդրոսյան հաշտության պայմանների համաձայն դուրս բերել իր զորքերը Հարավային Կովկասից: Նրանց տեղը զբաղեցրեցին բրիտանական զորքերը: Սկզբնական շրջանում բրիտանական հրամանատարությունը՝ ի դեմս բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնի, հրաժարվում էր ճանաչել ադրբեջանական կառավարությունը, որը, հրամանատարի կարծիքով, ստեղծվել էր օսմանյան խարդավանքների արդյունքում և չէր կարող հավակնել ներկայացնելու ժողովրդի կամքը:[26] Այնուամենայնիվ, ցանկանալով ամրապնդել իր դիրքերը Ադրբեջանում, բրիտանական հրամանատարությունը 1919 թ. հունվարի 15-ին Զանգեզուրի և Ղարաբաղի բնակիչներին հայտնեց նախկին ռուսական Ելիզավետպոլի նահանգի

[24] Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Թ, Երևան, 2001, էջ 639:
[25] Նույն տեղում, էջ 730:
[26] Swietochowski T., Russian Azerbaijan. 1905-1920. Cambridge University Press, 2004, p. 141

Զանգեզուր, Շուշի, Ջևանշիր, Ջեբրաիլ գավառներում ադրբեջանական կառավարության կողմից բժիշկ Սուլթանովին ժամանակավոր գեներալ-նահանգապետ նշանակելու մասին՝ նշելով, որ նա վայելում է բրիտանական հրամանատարության աջակցությունը[27]: Միաժամանակ բրիտանական ռազմական առաքելությունը պահանջեց ամբողջապես զինաթափել Ղարաբաղի հայ բնակչությունը: Լեռնային Ղարաբաղի հայերը հրաժարվում էին ճանաչել Սուլթանովին, նրա իշխանությունը փաստացի տարածվում էր միայն մահմեդական բնակչության վրա, մինչդեռ հայերը շարունակում էին կառավարվել իրենց Ազգային խորհրդի կողմից:

1919 թ. փետրվարի 19-ին Ղարաբաղի հայերի IV համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էին Վարանդայի, Դիզակի, Խաչենի, Ջրաբերդի և Շուշիի ներկայացուցիչները, հեռագրեր հղեց Ադրբեջանի կառավարությանը, դաշնակիցների ներկայացուցիչ գեներալ Թոմսոնին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Փարիզի խաղաղության կոնֆերանսում հայկական ներկայացուցիչներին: Հեռագրում ասվում էր, որ համագումարն իր վճռական բողոքն է հայտնում Սուլթանովի նշանակման և հայկական Ղարաբաղն իրեն ենթարկելու Ադրբեջանի կառավարության մտադրության դեմ. «Հիմնվելով ժողովուրդների ինքնորոշման տեսակետի վրա՝ Ղարաբաղի հայ բնակչությունը հարգանքով է վերաբերվում հարևան ժողովրդի ինքնորոշման իրավունքին, միաժամանակ վճռական բողոքն է հայտնում հայկական Ղարաբաղի հարցում այդ սկզբունքը ոտնահարելու ադրբեջանական կառավարության փորձերի դեմ. հայկական Ղարաբաղը երբեք չի ճանաչել և չի ճանաչելու Ադրբեջանի իշխանությունն իր նկատմամբ»:[28]

Միաժամանակ, հայկական Ղարաբաղի համար համագումարը մշակեց Ժամանակավոր կանոնադրության նախագիծ, «որը մինչ Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշումը նրա համար սահմանում էր մարզային խորհուրդ՝ Շուշիում նստավայրով, որը կազմված էր 7 հայերից և 3 մահմեդականներից՝ բնակչության թվի համամասնությամբ»:[29] Հատուկ համաձայնությամբ խորհրդի կազմում կարող էր ընդգրկվել մեկական ներկայացուցիչ Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններից: Ժամանակավոր կանոնադրության նախագիծը նախատեսում էր Շուշիում գտնվող Բրիտանական առաքելության ղեկավարի իրավունքը իրականացնելու վերահսկողություն խորհրդի աշխատանքի նկատմամբ:

Այդ նախագիծը ներկայացնում էր զիջումների առավելագույն չափը, որոնք համագումարը կարող էր անել բրիտանական հրամանատարությանը: Վերջինս, այնուամենայնիվ, մերժեց ղարաբաղյան կողմի առաջարկը և շարունակում էր պնդել ադրբեջանական գեներալ-նահանգապետության սկզբունքի վրա, թեպետ Խաղաղության կոնֆերանսի ապագա որոշման մասին վերապահումով:

Հարցի լուծումն արագացնելու նպատակով Ադրբեջանը կրկին դիմում է ուժի: Բրիտանական հրամանատարության թողտվությամբ ադրբեջանական զորքերը մտնում են զինաթափված Ղարաբաղ և 1919 թ. հունիսի սկզբներին կոտորած իրականացնում երկրամասի մայրաքաղաք Շուշիում և հարակից գյուղերում:

---

[27] Ադրբեջանի կառավարության կողմից ժամանակավոր գեներալ-նահանգապետ նշանակելու մասին բրիտանական ա-ռաքելության պաշտոնական ծանուցումը Զանգեզուրի և Ղարաբաղի բնակիչներին: Нагорный Карабах в 1918-1923 гг. с. 62.
[28] IV հայկական ազգային համագումարի նախագահի նամակը: Нагорный Карабах в 1918-1923 гг. с.79-80.
[29] Հայկական Ղարաբաղի ժամանակավոր կառավարման մասին կանոնների նախագիծ: Нагорный Карабах в 1918-1923 гг. с.80-81.

Նման պայմաններում հետագա արյունահեղության վտանգի[30] և անգլիացիների ճնշման ներքո 1919 թ. օգոստոսի 22-ին գումարված Ղարաբաղի հայերի 7-րդ համագումարը հարկադրված էր համաձայնվել ժամանակավոր՝ մինչև խաղաղության կոնֆերանսի որոշումը, համարել իրեն Ադրբեջանի կազմում: Դրա դիմաց երաշխավորվում էին՝ ինքնակառավարում, զինաթափման դադարեցում, խաղաղ ժամանակաշրջանում զորքի ներկայություն և Հայկական խորհրդի կողմից զորքերի տեղաշարժի նկատմամբ վերահսկողություն:

Այդ համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո, իր առջև դրված խնդիրն իրականացրած համարելով, բրիտանական կայազորն օգոստոսի 22-ին լքում է Ղարաբաղը: Սակայն Ադրբեջանի կառավարությունը չի պահպանում իր պարտավորությունները՝ ռազմական և պատժիչ գործողությունները շարունակվեցին ավելի մեծ չափերով: 1920 թ. փետրվարի 19-ին Ադրբեջանի կառավարությունը վերջնագրի ձևով Ղարաբաղի Ազգային խորհրդին առաջարկում է վերանայել Ժամանակավոր համաձայնությունը, չկապել նրա գործողության ժամկետը խաղաղության կոնֆերանսի հետ և քննարկման դնել «Ղարաբաղի վերջնական միացման հարցն Ադրբեջանին՝ որպես վերջինիս անքակտելի տնտեսական մաս»:

Ադրբեջանի կառավարության և բանակի այս գործողությունները հարուցում են 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 4-ը գումարված Ղարաբաղի հայերի VIII Համագումարի դժգոհությունը, որը զգուշացնում է, որ «նմանատիպ գործողությունների կրկնության դեպքում Ղարաբաղի հայերը ստիպված կլինեն դիմել համապատասխան միջոցների իրենց կյանքն և պատիվը պաշտպանելու համար»: Այնուամենայնիվ, համագումարի ավարտից հետո ադրբեջանական իշխանությունները շարունակեցին ռազմական պատրաստությունները: 1920 թ. գարնանը Ղարաբաղ և Զանգեզուր են հասնում լրացուցիչ ադրբեջանական զորքեր՝ 5000 մարդ թվաքանակով, 6 դաշտային և 8 լեռնային թնդանոթներով:

Ակնկալվող ադրբեջանական ներխուժման պայմաններում Ղարաբաղում զինված ապստամբություն է բռնկվում: Այն ճնշելու և Ղարաբաղը գրավելու նպատակով ներգրավվում են Ադրբեջանի տրամադրության տակ գտվող զորքերի կեսը և տեղացի քրդերից կազմված ոչ կանոնավոր ջոկատները21: 1920 թ. մարտին Շուշին երրորդ անգամ ենթարկվեց ջարդերի՝ այս անգամ ավելի անխնա կերպով: Ադրբեջանական զորքերն ու զինված կազմավորումները թալանեցին ու հրկիզեցին քաղաքի հայկական հատվածը՝ կազմակերպելով զանգվածային կոտորած և վտարելով հայ բնակչությանը: Ադրբեջանական ուժերը հրետանու կիրառմամբ գրավեցին ու ավերեցին Ասկերան ավանը, բազմաթիվ գյուղեր՝ հատկապես Ղարաբաղի հյուսիսում: Հայկական կառավարության պնդմամբ դաշնակիցները որոշում են հատուկ հանձնաժողով ուղարկել Ղարաբաղ, տեղում իրադարձություններին ծանոթանալու և արյունահեղությունը դադարեցնելու համար, ինչի մասին նրանք 1920 թ. ապրիլի 5-ին համատեղ նոտայով տեղեկացնում են Ադրբեջանի և Հայաստանի կառավարություններին: Սակայն ադրբեջանական կառավարությունը հրաժարվում է ընդունել հանձնաժողովին:

Ապրիլի սկզբներին Ղարաբաղի հայկական ինքնապաշտպանական ուժերին հաջողվում է պաշտպանությունից անցնել հարձակման և ոչ միայն վռնդել ադրբեջանական զորքերը, այլև ճեղքելով երեքամյա շրջափակումը՝ վերամիավորվել Զանգեզուրի հետ:

---

[30] Ադրբեջանական իշխանության ներկայացուցիչ Սուլթանովը հրամայում է հայկական Շոշ գյուղի և Շուշիի հայկական մասի վրա ուղղել թնդանոթները, փակել Եվլախ-Շուշի ճանապարհը, ինչից հետո պահանջում է, որպեսզի նստաշրջանի պատվիրակները 48 ժամվա ընթացքում հավանության արժանացնեն Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու մասին իրենց ներկայացրած համաձայնագրի տեքստը:

1920 թ. ապրիլի 23-29 կայացած Ղարաբաղի հայերի IX Համագումարը որոշում է կայացնում ժամանակավոր համաձայնությունը համարել խախտված՝ «հաշվի առնելով ադրբեջանական զորքերի կազմակերպված հարձակումը Ղարաբաղի հայ խաղաղ բնակչության վրա» և հայտարարում «Լեռնային Ղարաբաղի միավորման մասին Հայաստանի հետ՝ որպես նրա անքակտելի մաս»:

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում սովետական իշխանության հաստատումից հետո Կարմիր բանակը գրավում է Ղարաբաղը՝ հայտարարելով այն վիճելի տարածք:

Ադրբեջանի նկրտումները Ղարաբաղի նկատմամբ չեն ճանաչվել նաև միջազգային մակարդակով: Ազգերի լիգայի հինգերորդ կոմիտեն 1920 թ. դեկտեմբերի 1-ին իր երրորդ ենթակոմիտեի զեկույցի հիման վրա մերժեց Ազգերի լիգա ընդունվելու վերաբերյալ Ադրբեջանի խնդրանքը՝ հիմնավորելով իր որոշումը նրանով, որ Ադրբեջանը չունի հստակ սահմանված պետական սահմաններ:

2.2 Հայ-ադրբեջանական զինված դիմակայությունը և գերտերությունների դերը այդ դիմակայության մեջ

Մուդրոսի զինադադարի համաձայն՝ տարածաշրջանից թուրքական զորքերի հեռանալուց հետո Լեռնային Ղարաբաղում վիճակը, ըստ էության, չփոխվեց, քանի որ մուսուլմանական շրջանակներից բխող վտանգն ամենևին չվերացավ:

Մեծ Բրիտանիայի կառավարության 1918թ. դեկտեմբերի 11-ի որոշմամբ անգլիական զորամասերը Կովկասում ապահովելու էին թուրքերի կողմից Մուդրոսի զինադադարի պայմանների կատարումը: Բրիտանացիները ծրագրում էին չեզոքացնել տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը:

Այդ նպատակն իրականացնելու գործում Անգլիան առանձնապես կարևորում էր Ադրբեջանի դերը, քանի որ վերջինս տարածաշրջանում առանձնանում էր իր հակահեղափոխական ու հակառուսական ընդգծված գործելակերպով, ինչը համահունչ էր անգլիացիների[31] աշխարհաքաղաքական շահերին: Բացահայտ թուրքամետ քաղաքականությունը մուսավաթականներին չէր խանգարում անգլիացիների հետ համագործակցելու եզրեր գտնել «վիճելի» տարածքները նվաճելու հարցում: 1918թ. նոյեմբերի սկզբներին հինգ հոգուց կազմված բրիտանական ներկայացուցչությունը մայոր Գիբբոնի գլխավորությամբ այցելեց Շուշի: Մայորը Բաքվում դաշնակից զորքերի հրամանատար գեներալ Վ.Թոմսոնի անունից տեղեկացրեց, որ ներկայացուցչությունը կոչված է կարգ ու կանոն հաստատելու գավառում, իսկ քաղաքական ու տարածքային խնդիրները չէին վերաբերում ներկայացուցչությանը, քանի որ դրանք պետք է լուծվեին Փարիզի վեհաժողովում:

1919թ. հունվարի 15-ին Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահը նամակով տեղեկացրել է Բաքվի Հայոց ազգային խորհրդին, թե անգլիական ներկայացուցչության ժամանելուց հետո, ամբողջ հույսը դնելով նրա վրա, դիմել են խաղաղ կյանքի՝ հաստատ հավատացած լինելով, որ իրենց կյանքի դեմ ոչ մի դավ չի նյութվի: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքականությանը, ապա նրա կառավարությունը, առաջնորդվելով դաշնակից երկրների բարձրագույն հրամանատարության խորհուրդներով, այն է՝ վիճելի տարածքին ուժի միջոցով տիրանալը, լրջորեն կվնասի նախահարձակվողի պահանջներին, և պետք է սպասել խաղաղության վեհաժողովի վճռին, շարունակում էր

[31] Հայոց պատմություն, Հ.4: Գիրք I, Եր., 2010, էջ 196:

չարդարացված զգուշավորություն ու սպասողականություն ցուցաբերել, ինչի հետևանքով հետագայում թանկ վճարեցին և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Լեռնային Ղարաբաղը: Բայց և այնպես արցախահայությունն ու նրա քաղաքական ուժերը ժամանակին կռահեցին անգլիացիների հակահայկական քաղաքականության էությունը և համոզվեցին, որ նրանց խոստումներին հավատալը սխալ է, իսկ նրանց հետ հույսեր կապելը՝ կործանարար: Նման պայմաններում արցախահայությանը մնում էր ապավինել սեփական ուժերին:

Շատ չանցած՝ մուսավաթականների կառավարությունը սկսեց մեծ թվաքանակով զինվորական ուժեր ուղարկել Լեռնային Ղարաբաղ և նրանց տեղակայել ռազմավարական նշանակության վայրերում: 1919թ. հունվարի 15-ին Ղարաբաղում անգլիական հովանավորության ներքո ստեղծվեց գեներալ-նահանգապետություն՝[32] Խոսրով բեկ Սուլթանովի ղեկավարությամբ: Հարցի այս կերպ լուծումից դժգոհ մնացին և Հայաստանի Հանրապետությունում, և Ղարաբաղում: Հայաստանի կառավարությունը բողոք հայտնեց Ադրբեջանի կառավարությանը՝ Հայաստանի տարածքային իրավունքները խախտելու համար և պահանջեց հետ քաշել զորքերը Ղարաբաղից: Արցախահայությունը հարկադրված էր իր գործերը վարել սեփական իշխանությամբ: Իսկ Ասկերանում, Խանքենդում, Զաբուղում և Շուշի քաղաքի մուսուլմանական մասում թշնամու տեղակայված մի քանի հազարի հասնող լավ զինված ամբոխը բերվել էր մարտական պատրաստության և սպասում էր հարձակման հրամանի: Արցախահայությունն ակտիվացնում է շփումները անգլիական հրամանատարության հետ: 1919թ. մարտի 26-ին՝ Բաքվում գնդապետ Դ.Շատելվորդի հետ հանդիպման ժամանակ, Ղարաբաղի պատվիրակներ՝ Շուշիի քաղաքագլուխ Գ.Մելիք-Շահնազարյանը և Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը մեկ անգամ ևս համոզվում են, որ անգլիացիներն ադրբեջանամետության խնդրում անզիջում են:

Գավառում ռազմաքաղաքական իրադրությունը կտրուկ սրվեց մայիսի վերջին: Մայիսի 20-ից Խ. բեկ Սուլթանովի կարգադրությամբ հայերի առջև փակվեցին արտաքին աշխարհի հետ կապող բոլոր ճանապարհները: Մուսավաթականները հունիսի առաջին օրերին հայ բնակչության զանգվածային կոտորածներ կազմակերպեցին Շուշի քաղաքում և նրա շրջակա Ղայբալիշեն, Կրկժան, Փահլուր և Ջամիլու գյուղերում: Անդրկովկասի բնակավայրերում տեղի էին ունենում հայության բողոքի ցույցեր: Հունիսի 22-ին Թիֆլիսում 30 հազարից ավելի ցուցարարների կողմից ընդունվում է բողոքի դիմում՝ ուղղված դաշնակից երկրների կառավարություններին՝ պահանջելով դատի տալ կոտորածի կազմակերպիչներին, Ղարաբաղից անհապաղ հեռացնել Ադրբեջանի իշխանությանը:

Բողոքի ձայն հնչեցրեց նաև Հայաստանի կառավարությունը՝ մեկ անգամ ևս փաստելով, որ ինքը չի ճանաչում Խ.բեկ Սուլթանովի գեներալ-նահանգապետությունը հայկական Ղարաբաղի սահմաններում:

Փոխզիջումային համաձայնագիր կայացնելու ամբողջ ծանրությունն ու պատասխանատվությունն ընկան Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի (օգոստոսի 12-ից 22-ը) վրա: Օգոստոսի 22-ին համագումարի կողմից ընտրված 16 հոգուց կազմված պատվիրակությունը Խ. բեկ Սուլթանովի հետ քննարկեց և ստորագրեց 26 կետից բաղկացած ժամանակավոր համաձայնագիր, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես՝ մինչև Փարիզի վեհաժողովի կողմից հար-

[32] Հայոց պատմություն, Հ.4: Գիրք I, Եր., 2010, էջ 197:

ցի վերջնական լուծումը, ընդունում է Ադրբեջանի իշխանությունը՝ պայմանով, սակայն, որ վերջինս չի միջամտի գավառի ներքին գործերին:

Պատերազմական իրավիճակում կարևորելով երկու հանրապետությունների միջև սահմանների հստակեցման խնդրի լուծումը՝ 1919թ. նոյեմբերի 20-ին Թիֆլիսում Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները բանակցություններ սկսեցին: Նոյեմբերի 23-ին վարչապետներ Ա. Խատիսյանը և Ն. Ուսուբբեկովը ստորագրեցին համաձայնագիր, որով պետք է վերջ տրվեին պատերազմական գործողություններին: Կողմերը պայմանավորվեցին միջպետական հակամարտությունները այդուհետ լուծել խաղաղ բանակցությունների միջոցով:[33]

1919թ. սեպտեմբերին Ղարաբաղից (նաև ամբողջ Անդրկովկասից, բացի Բաթումից) հեռացան անգլիական զորքերը: Մուսավաթ պարագլուխները որոշել էին վերջնականապես նվաճել Ղարաբաղը: 1920թ. գարնանը Ադրբեջանը կենտրոնացրել էր ավելի քան 10 հազար զինվոր: Շուշի մեկնեց Նուրի փաշան: Խ.բեկ Սուլթանովի հրահանգով ադրբեջանցի զինվորները և տեղի մահմեդականները մարտի 22-23-ը արյան խրախճանք կատարեցին Շուշիի հայկական թաղամասում: Անխնա թալանվեցին բազմաթիվ գյուղեր:

Մի վերջին անգամ Ղարաբաղի հարցը քննարկման նյութ դարձավ 1920թ. ապրիլի 9-ին Թիֆլիսում՝ Անդրկովկասի երեք հանրապետությունների խորհրդաժողովում: Համադաշնության հարցի կապակցությամբ սկզբունքային քննարկումներն այդպես էլ կողմերին համաձայնության չբերեցին: Նույնը վերաբերում է սահմանների հարցին: Ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումով խորհրդաժողովը կասեցրեց աշխատանքները: Բոլշևիկյան կառավարությունը «վիճելի» տարածքների հարցում հավատարիմ մնաց մուսավաթական իշխանությունների վարած նվաճողական քաղաքականությանը: Ադրբեջանը ձգտում էր օր առաջ խորհրդային զորքերի միջոցով տեր դառնալու Ղարաբաղին և «վիճելի» մյուս տարածքներին:

Իրադարձությունների հորձանուտում Ադրբեջանի հին ու նոր ղեկավարները, ապավինելով Խորհրդային Ռուսաստանի ուժին, նորանոր զորամասեր ու ռազմական տեխնիկա էին մտցնում Լեռնային Ղարաբաղ: Մայիսի 12-ին Շուշի մտավ 11-րդ կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի 281-րդ գունդը: Նույնը օրը Շուշի ժամանեց Կովկասյան ճակատի ռազմական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկձեն:[34] 1920թ. հուլիսի վերջերին Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը գտնվում էին Խորհրդային Ռուսաստանի զորքերի ձեռքում: Ռուսական կողմը հավաստիացնում էր, որ իր զորքերի կողմից «վիճելի» տարածքների գրավումը նպատակ ունի կանխելու անխուսափելի արյունահեղությունն ու բախումները: 1920թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագիրը Ադրբեջանի համար արգելք չեղավ դառնալու Ղարաբաղի բախտի տնօրենը: Սեպտեմբերին Հայաստանի վրա քեմալական Թուրքիայի հարձակման հետևանքով Լեռնային Ղարաբաղը բոլորովին զրկվեց Հայաստանի Հանրապետությունից օգնություն ստանալու հույսից, չնայած ազատության համար պայքարը չէր դադարեցրել:

1919թ. օգոստոս-սեպտեմբերին ռազմաքաղաքական իրադրությունը հանրապետությունում դեռևս չափազանց ծանր էր ու ճգնաժամային: Թեև մի շարք վայրերում հաջողվեց լուրջ հարվածներ հասցնել թշնամուն, բայց դրությունն այնքան չէր կարգավորվել, որ Հայաստանը կարողանար զենքի ուժով Շարուր-Նախիջևանը վերադարձնելու փորձ աներ: Ուստի հարցը տեղափոխվեց դիվանագիտական բնագավառ:

---

[33] Հայոց պատմություն, հ. 4: Գիրք I, Եր., 2010, էջ 199:
[34] Հայոց պատմություն, հ.4: Գիրք I, Եր., 2010, էջ 201-202:

Դեռևս հուլիսին Հայաստանի կառավարությունը մի քանի անգամ դիմել էր Անդրկովասի բրիտանական հրամանատարությանը՝ խնդրելով միջամտել և զսպել մուսուլմանական շարժումը: Օգոստոսի 2-ին Բաշ Նորաշենում անգլիական պատվիրակությունը հանդիպում է Հալիլ բեյին և առաջարկում վերջ տալ ապստամբությանը և ենթարկվել Հայաստանի կառավարությանը: Սակայն թուրք սպան ոչ միայն մերժում է այդ առաջարկը, այլև ստեղծված վիճակի համար մեղադրում անգլիացիներին, որոնք, ըստ նրա, անարդար բաժանում են կատարել՝ հայաբնակ Ղարաբաղը կցելով Ադրբեջանին, իսկ թաթարաբնակ Շարուրն ու Նախիջևանը՝ Հայաստանին:

Միջնորդությամբ հարցը լուծելու հաջորդ փորձը կատարում է ԱՄՆ բանակի գնդապետ Ու.Հասկելը, որը Փարիզի վեհաժողովի «Հինգի խորհրդի» կողմից նշանակված էր Հայաստանի գերագույն կոմիսար: Օգոստոսի 22-ին Հայաստանի խորհրդարանի նիստում Հասկելը հայտարարեց, որ կհարկադրի Ադրբեջանին վերջ տալ Հայաստանի նկատմամբ թշնամական գործողություններին: Օգոստոսի 23-ին Ու.Հասկելը մեկնեց Թիֆլիս, այնուհետև՝ Բաքու, որտեղ մոռանալով Երևանում արված հայտարարությունը, օգոստոսի 29-ին Ադրբեջանի վարչապետ Ն.Ուսուբբեկովի հետ ստորագրեց համաձայնագիր, որով ստեղծվում էր չեզոք գոտի՝ ամերիկյան գեներալ-նահանգապետի գլխավորությամբ, որի կազմի մեջ մտնում էին ոչ միայն Շարուրն ու Նախիջևանը, այլև Դարալագյազը: Հայաստանի կառավարությունը չէր կարող համաձայնել այս համաձայնագրին. նախ՝ Հայաստանից անջատվում էր նաև Դարալագյազը, և երկրորդ՝ չեզոք գոտին, փաստորեն, դառնում էր Ադրբեջանի ազդեցության գոտի:

Սեպտեմբերի սկզբին Թիֆլիսում Ու. Հասկելը բանակցություններ էր վարում մի կողմից՝ Ա. Խատիսյանի, մյուս կողմից՝ Ն.Ուսուբբեկովի հետ: Կողմերի դիրքորոշումներն անհաշտ էին: Ա. Խատիսյանին հաջողվում է համաձայնագրի նախագծում Դարալագյազը հանել չեզոք գոտու կազմից, կետ մտցնել, որ Բաքու-Ջուլֆա երկաթուղին չկառուցվի առանց Հայաստանի համաձայնության և այլն: Սակայն Ն.Ուսուբբեկովը բողոքում և հեռանում է Թիֆլիսից: Հասկելը որոշում է շրջանցել Բաքուն և համաձայնագիրը ստորագրել տալ Նախիջևանին, բայց վերջինս էլ մերժում է այն: Ու.Հասկելը, ձեռքի տակ չունենալով զինված ուժ՝ իր կամքը թելադրելու համար, որոշում է հրաժարվել համաձայնագրի գաղափարից և բավարարվել հայտարարությամբ, որը պետք է հրապարակվեր հոկտեմբերի 23-ին՝ ամերիկյան գեներալ-նահանգապետի՝ Նախիջևան մտնելու օրը: Հայաստանը համաձայն էր հարցի նման լուծմանը, իսկ Ադրբեջանը՝ ոչ: Դրա համար էլ Նախիջևանում գեներալ-նահանգապետ նշանակված գնդապետ Դեյլիին թուրքերը թշնամաբար դիմավորեցին, կազմակերպեցին ցույցեր, իսկ մուսուլմանական ազգային խորհուրդը հայտարարեց, որ ինքն Ադրբեջանից բացի ուրիշ ոչ մի իշխանություն չի ճանաչում: Դեյլին դեռ մեկ-երկու ամիս մնաց Նախիջևանում, բայց արդեն ոչ թե որպես նահանգապետ, այլ ամերիկյան ներկայացուցիչ-խորհրդական:[35]

1920թ. առաջին կեսին Շարուր-Նախիջևանի քաղաքական կացության մեջ էական փոփոխություններ և լուրջ իրադարձություններ տեղի չունեցան, բացի այն սուր հակամարտությունից, որ ծագեց Նախիջևանի թուրքամետ և ադրբեջանամետ ուժերի միջև: Մոսկվան հակված չէր անվերապահորեն պաշտպանելու իր դաշնակից Խորհրդային Ադրբեջանի տարածքային նկրտումները: Մասնավորապես Շարուր-Նախիջևանը Մոսկվան համարում էր Հայաստանի անբաժան մաս: Կարմիր բանակի հեծյալ գնդերից մեկը հուլիսի վերջին հայտնվում է Նախիջանում: 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրի համաձայն՝ Նախի-

[35] Հայոց պատմություն, հ. 4: Գիրք I, Եր., 2010, էջ 188-189:

ջևանը, ինչպես նաև Արցախն ու Զանգեզուրը ժամանակավորապես զինագրավվելու էին Խորհրդային Ռուսաստանի զորքերի կողմից: 1920թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմի շրջանում՝ ընդհուպ մինչև նոյեմբեր ամիսը, Նախիջևանի ճակատում ռազմական գործողություններ չծավալվեցին:

1918 թ. դեկտեմբերի կեսերին բրիտանական բանակի մայոր Վ. Գիբոնը կապիտան Ջ. Սքուայրի հետ մեկնում է Գորիս՝ բանակցելու Զանգեզուրի Ազգային խորհրդի անդամների հետ:[36] Պատվիրակության կազմում էին նաև Բաքվի մուսավաթական կառավարությունից Աբդուլլա բեկ Հասանբեկովը և Բաքվի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչ Չիլինգարյանը: Պատվիրակությունը Անդրանիկի հետ համաձայնության եկավ, որ վերջինս Զանգեզուրում իր զորամասով պիտի մնա մինչև 1919 թ. մայիսը: Շփումներ հաստատելով Անդրանիկի և Զանգեզուրի Ազգային խորհրդի հետ՝ Վ. Գիբոնը և պատվիրակության մյուս երկու անդամները մեկնում են Նախիջևան՝ ծանոթանալու տեղի վիճակին: Առանց անգլիացիների համաձայնության՝ Անդրանիկը տրամադիր չէր Զանգեզուրից մտնել Նախիջևան և սպասում էր այնտեղից Վ. Գիբոնի՝ Գորիս վերադարձին: Զանգեզուրցիները և հատկապես արցախցիները դեմ էին Անդրանիկի և նրա զորամասի հեռանալուն: 1918թ. դեկտեմբերի 29-ին մայոր Վ. Գիբոնը և նրա առաքելության մյուս երկու անդամները Նախիջևանից վերադարձան Գորիս: Անգլիացի մայորը այստեղ մի քանի նոր հանդիպումներ է ունենում Անդրանիկի հետ, որոնց ընթացքում նա աստիճանաբար փոխում էր իր կարծիքը հայ Զորավարի մասին, համոզվում, որ նրա մասին Ադրբեջանի պաշտոնյաների և մուսավաթական մամուլի տարածած զրպարտիչ լուրերը հեռու են իրականությունից: Երկու օր հետո մայոր Վ. Գիբոնը իր առաքելության երկու անդամների հետ Գորիսից մեկնում է Շուշի:

Շուշիից Վ. Գիբոնը ուղևորվում է Բաքու՝ գեներալ-մայորի պաշտոնակատար Վ. Թոմսոնին զեկուցելու իր ուղևորության արդյունքների մասին: Դեկտեմբերի 30-ին զորավար Վ. Թոմսոնը Բաքվում պաշտոնապես հայտարարեց, որ իր կառավարությունը Արցախի և Զանգեզուրի հարցում աներեր կանգնած է Ադրբեջանի կողքին:

1919 թվականը Զանգեզուրի և Արցախի համար սկսվեց նոր տագնապներով, քանի որ անգլո-ադրբեջանական համագործակցությունը աստիճանաբար սպառնալից ծավալներ էր ընդունում: 1919 թ. հունվարի 1-ից Ադրբեջանի մի քանի հազարանոց բանակը՝ գնդացիրներով ու թնդանոթներով համալրված, մոտեցավ Զանգեզուրի և Լեռնային Արցախի մատույցներին: Դեպի Արցախ և Զանգեզուր շարժվող ադրբեջանական զորքերի հետ էին նաև թուրքական զորամասեր, որոնց գործողությունները կատարվում էին բրիտանական հրամանատարության գիտությամբ: Ադրբեջանի զորքերը հունվարի 1-ին առաջին հարվածը հասցրին Կապանի սահմաններին: Կապանի ուղղությամբ կրած խայտառակ պարտությունից կատաղած մուսավաթականները ձեռնարկեցին արյունալի նոր ոճիրներ Ադրբեջանի տարբեր վայրերի խաղաղ հայ բնակչության նկատմամբ:

Թուրք-թաթարների նոր հարձակումներն ակտիվացրին Հայաստանի Հանրապետության կառավարության դիվանագիտական գործողությունները և նրան վերջնականապես դուրս բերեցին սպասողական վիճակից: Քանի որ Զանգեզուրը և Արցախը Ադրբեջանին հանձնելու դիմաց անգլիացիները հակված էին Նախիջևանի երկրամասը Հայաստանին թողնելու մտքին, Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը 1919 թ. հունվարի 14-ին որոշում ընդունեց Նախիջևանի գեներալ-նահանգապետ նշանակել գեներալ-մայոր Գրիգոր Հարությունի

[36] «Արև», 1919, 11 փետրվարի, թիվ 5:

Շելկովնիկյանին: 1919 թ. հունվարի 15-ին անգլիացիների երաշխավորությամբ մուսավաթական կառավարությունը Ելիզավետպոլ նահանգի հարավարևելյան մասի՝ Շուշիի, Զանգեզուրի, Զևանշիրի և Զաբրայիլի չորս գավառներից կազմեց նահանգապետություն և նույն օրը դրա ղեկավարությունը հանձնեց գեներալ-նահանգապետ նշանակված Խոսրով բեկ Սուլթանովին:[37]

Անգլիական հրամանատարության և Բաքվի իշխանությունների կողմից Ադրբեջանի կազմում Ղարաբաղ-Զանգեզուրի գեներալ-նահանգապետության ստեղծումը մեծ դժգոհություն էր առաջ բերել ոչ միայն այդ երկու երկրամասերի հայ բնակչության և հայկական իշխանությունների շրջանում: Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Սիրական Տիգրանյանը բողոքի նոտա ուղարկեց Ադրբեջանի կառավարությանը՝ հայտարարելով, որ Զանգեզուրն ու Արցախը Հայաստանի անբաժան մասերն են:[38] Հայաստանի Հանրապետության կառավարության վրա թողած տհաճ տպավորությունը մեղմելու համար գեներալ-մայորի պաշտոնակատար Վ. Թոմսոնի հանձնարարությամբ մայոր Վ.Գիբոնը գալիս է Գորիս, հանդիպում Անդրանիկին, նոր քննարկումներ սկսում: Գորիսից Վ. Գիբոնը մեկնում է Նախիջևան, տեսակցում անգլիացի զինվորական նահանգապետ կապիտան Ֆրեդերիկ Իստլենդ Լաուտոնին և գնում Երևան: Հայաստանի Հանրապետության կառավարությունը մուսավաթական կառավարության և անգլիացիների նվաճողական քայլերին ընդդեմ 1919 թ. հունվարի 21-ին որոշում է ընդունում՝ Զանգեզուրի և Արցախի հայկական շրջանների ժամանակավոր միասնական վարչություն ստեղծելու մասին՝ ղեկավար (պետական կոմիսար) նշանակելով շտաբս-կապիտան Արսեն Շահմազյանին:

1919 թ. հունվարի վերջերին զորավար Վ. Թոմսոնը, այլ պաշտոնի անցնելու կապակցությամբ, Բաքվից գալիս է Շուշի, այնտեղից ժամանում Գորիս, ապա՝ Նախիջևան-Ղամարլու գծով անցնում Երևան՝ Թիֆլիս գնալու համար: Ադրբեջանական զինված հրոսակախմբերը թուրք զինվորականների ղեկավարությամբ շարունակ հարձակումներ էին գործում սահմանագծի հայկական գյուղերի վրա: Գեներալ-նահանգապետ նշանակված Խոսրով բեկ Սուլթանովը փետրվարի 10 (23)-ին մեծ շուքով եկավ Շուշի: Նույն օրը քաղաքի թուրքական թաղամասում նա հայտարարեց, որ իր հիմնական նպատակն է զենքի ուժով կոտրել հայերի դիմադրությունը և Արցախն ու Զանգեզուրը ենթարկել Ադրբեջանին: Փետրվարի 12 (25)-ին հրավիրվեց համաարցախյան 4-րդ համագումարը, որը կրկին որոշեց Արցախը համարել Հայաստանի անբաժան մաս, ոչ մի դեպքում չճանաչել Ադրբեջանի իշխանությունը և մերժել ադրբեջանական կառավարության պահանջը՝ Արցախի կողմից ուղարկել պատգամավորներ՝ մասնակցելու Ադրբեջանի խորհրդարանի աշխատանքներին: Չնայած անգլիացիների ջանքերին՝ Սուլթանովի և ադրբեջանական զորքի ազդեցությունը Շուշի քաղաքից այն կողմ չէր անցնում: Արցախի բոլոր գավառները՝ Վարանդան, Խաչենը, Զևանշիրն ու Դիզակը, կառավարվում էին Արցախի Ազգային խորհրդի կողմից:

Գեներալ-նահանգապետ Սուլթանովին աջակցելու համար 1919 թ. փետրվարի վերջերին Շուշի եկավ անգլիական երկրորդ առաքելությունը՝ Գոդֆրի Նոել Գրեյ Մոնք-Մեյսոնի գլխավորությամբ, 400 զինվորներով: Անդրանիկը դեռ Գորիսում էր, որ Զանգեզուրի և Արցախի պետական կոմիսար նշանակված Արսեն Շահմազյանը 1919 թ. մարտի 12-ին հասնում է Գորիս և անմիջապես անցնում իր պարտականությունների կատարմանը:

---

[37] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 31, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 15, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 55:
[38] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 190, թ. 5:

Ա. Շահմազյանի Գորիս ժամանելու հաջորդ օրն իսկ Անդրանիկը վար դրեց Զանգեզուրի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պարտականությունը և գավառին վերաբերող զանազան հանձնարարություններ տալու իրավունքը:

1919 թ. մարտի 18-ին Գորիս քաղաքում բացվեց Գորիսի և Սիսիանի շրջանների գյուղացիական համագումարը՝ 62 պատվիրակների մասնակցությամբ: Համագումարը դատապարտեց մուսավաթական կառավարության ոտնձգությունները Զանգեզուրի նկատմամբ և վճռականություն հայտնեց «Հայաստանի Հանրապետության երկրամաս Զանգեզուրը բռնագրավել ցանկացող Ադրբեջանի մուսավաթական կառավարության ոտնձգություններին պատասխանել զենքով»:[39] 1919 թ. ապրիլի սկզբներին Զանգեզուրի Ազգային խորհրդի վերընտրությունից հետո նախկին խորհուրդը ներկայացրեց իր հրաժարականը: Հայաստանի կառավարությունը, ընդառաջ գնալով Զանգեզուրի ու Արցախի ժողովրդի միահամուռ փափագին, ինչպես նաև ելնելով Զանգեզուր-Արցախի համար ընդհանուր պետական կոմիսար նշանակելու փաստից, որոշեց ՀՀ Զանգեզուրի նորընտիր Ազգային խորհուրդը վերանվանել ԶանգեզուրՂարաբաղի միացյալ շրջանային (մարզային) խորհուրդ և նրա կազմը համալրել Արցախի ներկայացուցիչներով: Այդ ձևով պաշտոնապես նվիրագործվեց Ղարաբաղ-Զանգեզուրի միությունը և երկուսի կցումը մայր Հայաստանին: Զանգեզուր-Արցախի ընդհանուր պետական կոմիսար նշանակվեց շտաբս-կապիտան Արսեն Շահմազյանը: Իր հերթին Ադրբեջանը անգլիացիների հովանավորությամբ աստիճանաբար սեղմում էր օղակը Ղարաբաղի և Զանգեզուրի շուրջը՝ մեծաթիվ զորքեր կենտրոնացնելով ռազմավարական կարևոր կետերում՝ Ասկերանում, Խանքենդում, Շուշիում, Զաբուղում, Կարյագինոյում, իսկ Նախիջևանի կողմից՝ Դարալագյազի ուղղությամբ: Մուսավաթական զորքերին միացել էին Ադրբեջանում և Նախիջևանում մնացած թուրքական ջոկատները:

Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը 1919 թ. մայիսի 17-ին Հայաստանի նախարարների խորհրդին հղած նամակում անդրադարձել էր Զանգեզուրի, Արցախի և Նախիջևանի նկատմամբ ադրբեջանական կառավարության զավթողական ծրագրերին: Ադրբեջանը, նշված էր նամակում, ոչ մի բանի առջև կանգ չի առնում, որպեսզի բոլոր միջոցներով իր տիրապետությունը տարածի Զանգեզուրի և Նախիջևանի գավառների վրա: Ինչպես Զանգեզուրում, այնպես էլ Նախիջևանում տեղի են ունենում մուսուլման բնակչության ապստամբական առկայծումներ՝ նախապես մշակված ծրագրով:

1918թ. հունիսի 28-ին Խ. Սուլթանովը հարձակում գործոց Զանգեզուրի վրա: Ադրբեջանական 1500 զինվորից բաղկացած կանոնավոր զորամասը և նրան միացած շուրջ 2000-անոց խուժանը՝ Քյարիմ բեյի հրամանատարությամբ, դուրս գալով Կարյագինոյից, շարժվում է դեպի Կապանի սահմանը: Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդը, հուլիսի 1-ի նիստում քննության առնելով գավառի պաշտպանությանն ուղղված մի շարք կարևորագույն հարցեր, որոշեց գավառում հաստատել ռազմական դրություն: Անդրադառնալով Զանգեզուրի քաղաքական ապագային՝ Շրջանային խորհրդի նախագահը վարչապետին տեղեկացնում է, որ գավառը երբեք այնպիսի աննպաստ պայմաններում չի եղել, ինչպես այժմ: Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպման ամենապատասխանատու ժամանակաշրջանում՝ հուլիսի 14-ին, Գորիս քաղաք է ժամանում Շուշիի ամերիկյան առաքելության կողմից ուղարկված ամերիկյան մի հանձնախումբ՝

[39] «Արև», 1919, թիվ 59, ապրիլի 24:

գնդապետ Ժ. Հ. Ֆորդի գլխավորությամբ՝ գավառի բժշկական և սանիտարահիգիենիկ վիճակին ու գաղթականության խնդիրներին ծանոթանալու համար:

1919 թ. ՀՅԴ Բյուրոյի կողմից Զանգեզուր է ուղարկվում Գ.Նժդեհը ՝ Կապանի ինքնապաշտպանությունը ղեկավարելու: 1919 թ. օգոստոսին, գալով Գորիս, նա տեսակցեց Արսեն Շահմազյանի հետ և անմիջապես անցավ Կապան: Նախարարների խորհուրդը 1919 թ. սեպտեմբերի 3-ին որոշում է ընդունում և Գորիս է ուղարկում 9-րդ լեռնային մարտկոցը: Չնայած Զանգեզուրը զավթելու բոլոր ջանքերին՝ թշնամուն վիճակված չէր հասնելու իր նպատակին: Համառ ջանքերով գավառի հայությունը իր լեռնավայրը դարձնում էր անառիկ մի ամրոց: Շատ շուտով զանգեզուրցիները Ադրբեջանի բանակին և թուրք-քրդական հրոսակախմբերին հասցնելու էին կործանիչ հարվածներ և իրենց անօրինակ մարտական սխրագործություններով բազում էջեր գրելու հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական տարեգրության մեջ: Թեև Ադրբեջանը լարել էր իր բոլոր ուժերը՝ Զանգեզուրին տիրանալու համար, բայց գավառի հայությունը ամուր կանգնած էր իր դիրքերում և լսել անգամ չէր ուզում Բաքվին ենթարկվելու մասին:[40]

Գալով Կապարգողթ՝ Նժդեհը ականատես եղավ գյուղերում տիրող ծանր իրավիճակին: Շատ շուտով Նժդեհի շուրջը համախմբվեցին հավատարիմ զինակիցներ, որոնք պատրաստ էին արյան գնով կատարելու հրամանատարի բոլոր կարգադրությունները: 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Կապարգողթի բոլոր գյուղերում մեծ աշխատանքներ կատարվեցին խրամատներ պատրաստելու ուղղությամբ: Մուսավաթական բանակի գլխավոր նպատակն էր մեծ ուժերով հանկարծակի հարձակվել Զանգեզուրի վրա ու գրավել այն, բնաջնջել հայ բնակչությանը և գավառը միացնել Ադրբեջանին: Նոյեմբերի սկզբին ադրբեջանական զորքի թիվը հասել էր քսան հազարի:

1919 թ. հոկտեմբերի 25-ին Հայաստանի կառավարությունը դիմեց Բաքվում գտնվող բրիտանական գլխավոր կոմիսարին և ֆրանսիական զինվորական առաքելության ղեկավարին, որպեսզի նրանք, օգտագործելով իրենց հնարավորությունները, մուսավաթական կառավարությանը ստիպեն դադարեցնել զինված ուժերի շարժումը դեպի Զանգեզուրի սահմանները: Սակայն Երևանից ստացված դիմումը չարժանացավ նրանց ուշադրությանը: 1919թ. հոկտեմբերի 30-ին և 31-ին մուսավաթական կառավարությունը բողոքագրեր ուղարկեց Թիֆլիս ամերիկացի գնդապետ Ջ. Ռեյին, Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Ջ. Ուորդրոպին և Այսրկովկասում ֆրանսիական ռազմական առաքելության պետ, գնդապետ Պիեռ-Օգյուստ Շարդինյիին՝ պատերազմական նախապատրաստությունը արդարացնելով նրանով, որ իբր, ՀՀ կառավարությունը, հակառակ Վ. Հասկելիհետ ունեցած պայմանավորվածության, զորքեր է մտցրել Զանգեզուր, որն Ադրբեջանի տարածքն է: Նոյեմբերի 5-ին ՝ լույսը դեռ չբացված, ադրբեջանական բազմահազարանոց բանակը՝ 12000 զինվորներով և 30 թնդանոթներով, Գորիսի շրջանի ուղղությամբ ընդհանուր հարձակում սկսեց Զանգեզուրի վրա: Միաժամանակ թուրք հրոսակախմբերը Նախիջևանի կողմից հարձակում գործեցին Վայոց ձորի վրա՝ նպատակ ունենալով այդտեղ կոտրել հայերի դիմադրությունը, Սիսիանի կողմից դուրս գալ գավառի արևմտյան սահմանները և Զաբուղի կողմից հարձակվող ադրբեջանական զորքերի հետ աքցանի մեջ առնել Գորիսի ու Սիսիանի շրջանները:

Զանգեզուրի զինված ուժերի ընդհանուր հրամանատար Արսեն Շահմազյանի հանձնարարությամբ Սիսիանում տեղակայված հայկական զորամասերի և աշխարհազորային ջոկատների մի մասը՝ Պողոս Տեր-Դավթյանի հրամանատարությամբ, փակեց Ճաղատ սարից դեպի Եռաբլրի սարահարթ իջնող ճանապարհը, իսկ հիմնական ուժերը կենտրոնացան Նախիջևանին հարող

[40] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 180-181:

տարածքներում՝ այնտեղից հնարավոր հարձակումները կասեցնելու համար: Խայտառակ փախուստի դիմած և եկած ճամփով գլխիկոր հեռացած ադրբեջանական բանակը կռվի դաշտում թողեց շուրջ 500 դիակ: Զանգեզուրի վրա Ադրբեջանի թուրքերի չդադարող հարձակումներին ի պատասխան, գավառի հարավ-արևելյան շրջանի (Կապարգողթի) հայկական զինված ուժերի հրամանատար Գարեգին Նժդեհին հաջողվեց Կապանը և Օխչիձորը մաքրել խռովարար թուրքերից:

Զանգեզուրում և նրա մատույցներում ծավալված արյունալի կռիվները դաշնակից տերությունների՝ Այսրկովկասում գտնվող առաքելություններին տագնապի էին մատնել, քանի որ դրանքկարող էին Այսրկովկասում վերածվել մեծ պատերազմի, թուլացնել նորաստեղծ անկախ ազգային պետությունները ու ճանապարհ բացել այդ երկրներում խորհրդային կարգերի հաստատման համար: Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Օլիվեր Ուորդրոպը և ամերիկյան գլխավոր կոմիսար Վիլյամ Նեֆյու Հասկելի տեղակալ, գնդապետ Ջեյմս Ռեյը շտապեցին համաձայնություն տալ Հայաստանի առաջարկին և մտադրվեցին նոյեմբերի վերջին կազմակերպել Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների ղեկավարների հանդիպում՝ երկու երկրների միջև վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար: Նոյեմբերի 20-ին Թիֆլիսում՝ գնդապետ Ջ. Ռեյի առանձնասենյակում, տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի վարչապետեր Ալեքսանդր Խատիսյանի և Նասիբ բեկ Ուսուբբեկովի հանդիպումը: Երկու վարչապետերը որոշում են կռիվը դադարեցնել, Զանգեզուրի հարցը թողնել նախկին վիճակին, իսկ մնացյալ խնդիրները քննելու համար Բաքվում հրավիրել խորհրդաժողով:[41]

Հայաստանի և Ադրբեջանի միջև պաշտոնապես պատերազմ չէր հայտարարված, բայց գոյություն ունեցող վիճակը պատերազմականից ոչնչով չէր տարբերվում: Շարունակվող դիվանագիտական առճակատումները մեղմելու և տարակարծությունները հարթելու համար դաշնակիցների ներկայացուցիչները, Ա. Խատիսյանի և Ն. Ուսուբբեկովի միջև նոյեմբերի 23-ին Թիֆլիսում կնքած համաձայնագրի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն, նշանակեցին երկու հանրապետությունների ներկայացուցիչների հանդիպում: Դեկտեմբերի 14-ին Բաքվում բացված խորհրդաժողովի օրակարգում դրված էին մի շարք կարևորագույն հարցեր. 1) Սահմանների հարցը, 2) Երկաթուղային ու առևտրական պայմանագրերը, 3) Գաղթականների վիճակի կարգավորումը, 4) Երկու հանրապետությունների քաղաքացիների դատաստանական-իրավական հարաբերությունների կարգավորումը, 5) Հյուպատոսական հարցը: Խորհրդաժողովում Ադրբեջանի պատվիրակությունն առաջարկեց երեք հանրապետություններից կազմել համադաշնակցություն: Մինչ այդ նման առաջարկ, մանավանդ Վրաստանի կողմից, եղել էր մի քանի անգամ: Այդ առաջարկի գլխավոր նպատակն էր միացյալ ուժերով դիմադրել հյուսիսից սպասվող ռուս սպիտակգվարդիական կամավորական կամ բոլշևիկյան բանակների առաջխաղացմանը: Հայ պատվիրակները վաղաժամ նկատեցին այդ առաջարկը, քանի որ Հայաստանի սահմանները դեռ ճշտված ու ճանաչված չէին:

Խորհրդաժողովն ընդհատեց իր աշխատանքները, որպեսզի օրակարգային հարցերի շուրջ առաջացած խնդիրները երկու կողմերի պատվիրակները համաձայնեցնեն իրենց կառավարությունների հետ, ինչպես նաև տեղյակ պահեն խորհրդարաններին: Հայ պատվիրակները մեկնեցին Երևան՝ նոր հրահանգներ ստանալու և խորհրդաժողովը Թիֆլիսում շարունակելու համար: Թիֆլիսում վերսկսվեցին խորհրդաժողովի աշխատանքները՝ Այսրկովկասի

[41] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թթ. 35-36, Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 334-335:

երեք հանրապետությունների արտաքին գործերի նախարարների մակարդակով: Այս անգամ էլ կողմերը չկարողացան որևէ համաձայնության գալ:

Այդ նույն միջոցին Ադրբեջանը, գաղտնի դաշնակցելով քեմալական Թուրքիայի հետ, պատրաստվում էր նվաճելու Զանգեզուրը: Թուրքերը պարբերաբար գնդակոծում էին Կապանի շրջանի Զեյվա գյուղը, հարձակումներ գործում Գորիսի շրջանի Ճաղատ սարի ուղղությամբ: Նրանք հատկապես արյունալի ոճիրներ կատարեցին Գողթանի Ագուլիսներում:

Եթե 1919 թ. ամռանը Այսրկովկասում ԱՄՆ գլխավոր կոմիսար Վ. Հասկելը անվերապահորեն կողմ էր Զանգեզուրի կառավարումը գավառի Ազգային խորհրդին թողնելուն՝ մինչև Փարիզի խաղաղության համաժողովի վճիռը, ապա նույն տարվա նոյեմբեր-դեկտեմբերին նա արդեն այնպիսի առաջարկներ էր անում, որոնք նվազագույնի էին հասցնում զանգեզուրցիների իրավունքները, թեև նրանք թուրքերի դեմ փայլուն հաղթանակ էին տարել կռվի դաշտում: Դաշնակիցների լուռ կամ կրավորական անտարբերության պայմաններում Ադրբեջանը, չնայած Գորիսում կրած ջախջախիչ պարտությանը, մտադիր չէր ձեռք քաշել Զանգեզուրից և պատրաստվում էր գավառի վրա նոր հարձակումների:

Թիֆլիսում 1919 թ. նոյեմբերի 23-ին երկու երկրների միջև կնքված հաշտության համաձայնագիրը մնաց թղթի վրա: Երկու օր անց ընդհարումները շարունակվեցին:[42] Դեկտեմբերի 24-26-ին երկու Ագուլիսներում տանջանքներով մեռավ 1400 հոգի, իսկ գյուղերը դադարեցին գոյություն ունենալուց: 1919 թ. դեկտեմբերի վերջերին Հայաստանի զինվորական նախարար գեներալ Արարատյանի հրամանով Դրաստամատ Կանայանը (Դրո) նշանակվեց Զանգեզուր-Ղարաբաղի ընդհանուր հրամանատար: Դեկտեմբերի 20-ին նա իր շուրջ 600 հոգանոց էքսպեդիցիոն զորամասով ժամանեց Գորիս: Հունվարի 12-ին Այսրկովկասում բրիտանական գլխավոր կոմիսար Ջոն Օլիվեր Ուորդրոպը Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններին պաշտոնապես հայտարարեց, որ լորդ Քերզոնի առաջարկով Փարիզում դաշնակիցների Գերագույն խորհուրդը ճանաչել է Վրաստանի և Ադրբեջանի փաստական անկախությունը: Թեև Ադրբեջանը դե ֆակտո անկախ էր ճանաչվել առանց Զանգեզուրի և Արցախի, բայց այդ երկրամասերը Եվրոպայի համար առաջվա պես համարվում էին «չեզոք» տարածքներ, և դրանց պատկանելության հարցը դեռ որոշված չէր, թեև արդեն մեկ տարի (1919 թ. հունվարից) շարունակվում էր Փարիզի վեհաժողովը: Չնայած դրան՝ Ջ. Ուորդրոպը շարունակում էր Արցախի և Զանգեզուրի նկատմամբ ադրբեջանական զավթիչների հավակնությունների օգտին հայտարարություններ անել: 1920 թ. հունվարի 19-ին Նժդեհի վաշտերն անցան հարձակման: Հունվարի 20-ին այլևս անկարող լինելով որևէ դիմադրության՝ թշնամին գլխապատառ լքեց բոլոր դիրքերը: Կապարգողթի և Գորիսի ուժերը, գրավելով բազմաթիվ ռազմավարական կարևոր դիրքեր, ձեռք գցելով պատերազմական ավար և բացելով Գորիս-Կապան խճուղին, իրենց հսկողության տակ վերցրին 30-ից ավելի թուրքաբնակ գյուղեր: Հաղթական էին նաև Գորիսի շրջանի զինված ուժերը: 1920թ. մարտի 21-ին՝ դեռ Շուշին կործանելուց առաջ, ադրբեջանական զորքերը և նրանց միացած Աղդամից եկած մի քանի զորամասեր քաղաքից և շրջակա տարածքներից շարժվեցին դեպի Զանգեզուր: Մարտի 25-ին հայկական զորամասերը Գորիսի շրջանի արևելյան սահմաններից հակահարձակման անցան բոլոր երեք ուղղություններով: Առավել թեժ մարտեր տեղի ունեցան Զաբուղի և Մինքենդի տարածքներում:

[42] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 353-355:

Թիֆլիսում հրավիրվել էր անդրկովկասյան երեք հանրապետությունների ներկայացուցիչների համաժողովը, որը քննում էր Հայաստանի ու Ադրբեջանի ընդհարումներին վերջ տալու և ընդհանրապես երկրամասում խաղաղություն հաստատելու հարցը: Համաժողովի կազմակերպումը մտահղացել էր Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին, և այդ գաղափարին անմիջապես հավանություն էին տվել Այսրկովկասում դաշնակիցների ներկայացուցիչները: Այսրկովկասի հանրապետությունների ներկայացուցիչների համաժողովը բացվեց ապրիլի 9-ի կեսօրին՝ Ե. Գեգեչկորու նախագահությամբ: Ապրիլի 11-ին ընդունվեց հետևյալ որոշումը. «Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների համաժողովը որոշում է. Առաջին, անմիջապես դադարեցնել Ղազախում, Նախիջևանում, Օրդուբադում և Ղարաբաղում այժմ տեղի ունեցող արյունալի բոլոր ընդհարումները: Երկրորդ, Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններին հանձնարարել անհապաղ ձեռնարկել ամենավճռական միջոցներ, որպեսզի համապատասխան հանրապետության սահմաններում բացառվեն հայ և մուսուլման բնակչության ընդհարումները: Երրորդ, այս որոշման մասին շտապ տեղեկացնել ադրբեջանական և հայկական կառավարություններին՝ համապատասխան գործողությունների դիմելու համար: Ասկերանը գրավելուց հետո Ադրբեջանի առաջ բացվեց երազանքների հեռանկարը. նա այժմ իրագործելի համարեց նվաճել Ղարաբաղն ու Զանգեզուրը, ապա իջնել Արարատյան դաշտ և Հայաստանի վրայով գնալ և միանալ Թուրքիային:

Այդ ծրագիրն իրագործելու համար Ադրբեջանը աշխատում էր Հայաստանում առաջ բերել անկայունություն և այդ նպատակով ամեն ինչ անում էր՝ ոտքի հանելու Երևանից ոչ հեռու գտնվող թուրքաբնակ Զանգիբասարը և Վեդիբասարը:[43] Ապրիլի կեսերից Բաքվում սկսվել էր նախարարական ճգնաժամ: Մուսավաթի աջ արմատական թևը գտնում էր, որ կառավարությունը ոչ միայն ի վիճակի չէ գրավելու Զանգեզուրը, այլև ի վիճակի չէ կարգ հաստատելու Ղարաբաղում, ուստի պետք է հեռանա: Նասիբ բեկ Ուսուբբեկովը մինչ այդ արդեն հայտարարել էր, որ իր առողջական վիճակը ստիպում է հրաժարական տալ, և չորս ամսով մեկնել էր հանգստանալու և բուժվելու: Որպես նոր վարչապետի թեկնածու շրջանառվում էր հիմնականում Ֆ. Խան-Խոյսկու անունը: Ծայրահեղ մուսավաթականների նպատակն էր այնպիսի կառավարություն կազմել, որը, երկրի ողջ տնտեսական ու մարդկային ռեսուրսները մոբիլիզացնելով, վճռական հարձակումով լուծեր Արցախի ու Զանգեզուրի հայաթափման և զույգ երկրամասերը վերջնականապես Ադրբեջանին միացնելու խնդիրը: Իր զորամասով Երևանից գալով Գորիս՝ Զանգեզուր-Արցախ զինված ուժերի հրամանատար Դրոն իրեն է միացնում քաղաքի հեծյալ հարյուրյակը և ապրիլի 17-ին (այլ տվյալներով՝ ապրիլի 15-ին) Հարար-Սաֆյան-Խծաբերդ գյուղերի վրայով մտնում է Լեռնային Արցախի Վարանդայի շրջանը: Մի քանի օրվա ընթացքում համարյա ամբողջ Վարանդան՝ մինչև Ղարաբուլաղ գյուղը, անցնում է Դրոյի ուժերի հսկողության տակ: Արցախը հայտարարվեց մայր հայրենիքին վերամիավորված: Ապրիլի 21-ին կազմավորվեց Արցախի ժամանակավոր կառավարություն, որը գոյություն ունեցավ մինչև մայիսի 25-ը: Ապրիլի 23-ին Կապարգողթի ուժերը Նժդեհի գլխավորությամբ Կապանի շրջանից Դիզակի վրայով անցան Վարանդա և ուղղություն վերցրին դեպի Շուշի:

1920 թ. ապրիլի 25-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում գումարվեց Արցախի հայ գյուղացիության 9-րդ համագումարը, որին մասնակցում էին միայն Վարանդայի և Դիզակի պատգամավորները: Համագումարը որոշեց «Լեռնային Ղարաբաղը հայտարարել որպես

[43] Զոհրաբյան Է. Ա., Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010, էջ 49:

Հայաստանի Հանրապետության անքակտելի մաս և խնդրել Մոսկվայում գտնվող Հայաստանի պատվիրակությանը՝ համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը»: Ապրիլի 28-ին կարմիր բանակը մտավ Բաքու և մուսավաթական Ադրբեջանի Հանրապետությունը հայտարարվեց խորհրդային բոլշևիկյան հանրապետություն:Ռուս բոլշևիկյան ալիքը Ադրբեջանի վրայով հասավ Հայաստանի սահմաններին և առաջին հերթին սպառնաց Արցախին ու Զանգեզուրին: 1918 թ. գարնանից մինչև 1920 թ. գարունը, շուրջ երկու տարի, Զանգեզուրի հայությունը հերոսական մաքառումների և անհուն զոհողությունների գնով կարողացավ օսմանյան ու ադրբեջանական զավթիչներից պաշտպանել իր հայրենի լեռնաշխարհը:[44]

2.3 Կոմունիստական իշխանության հաստատումը Անդրկովկասում: Հայ-ադրբեջանական դիմակայության ավարտը

1920 թ. սկզբներին Խորհրդային Ռուսաստանում գերիշխող էր այն տեսակետը, որ ժամանակն է Անդրկովկասի երեք հանրապետություններում հաստատելու խորհրդային կարգեր: Այդ գործընթացը սկսվեց Ադրբեջանից: Դեռևս ապրիլի 26-ին Մ. Քեմալը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անունից մի նամակ է ուղարկում Վ. Լենինին, որում գրում էր, որ Թուրքիան պարտավորություն է վերցրել «հարկադրել Ադրբեջանի Հանրապետությանը՝ մտնելու խորհրդային պետությունների կազմի մեջ»: Հաջորդ օրը Ադրբեջանի պառլամենտն ընդունում է իշխանությունը բոլշևիկներին հանձնելու մասին որոշում, իսկ ապրիլի 28-ին Ադրբեջանը գրեթե առանց կրակոցի խորհրդայնացվում է: Փաստորեն, դա Խորհրդային Ռուսաստանի՝ Անդրկովկաս վերադառնալու առաջին քայլն էր: Նման ձևով Ադրբեջանի բոլշևիկ ղեկավարները նպատակ ունեին խորհրդային կարմիր բանակի ուժերի աջակցությամբ զավթել ՀՀ տարածքներն ու «լուծել իրենց ազգային խնդիրները»:[45] «Ադրբեջանի մուսավաթական դահիճ կառավարությունը, որ անխնա սրի էր քաշում Ղարաբաղի անզեն հայ գյուղացիությանը, տապալվեց: Խան ու բեկերի ձեռքից իշխանությունն անցավ ադրբեջանական «կոմունիստների» ձեռքը: Թվում էր, թե հասել է ժամը, երբ Անդրկովկասի երեք հանրապետությունների աշխատավոր դասակարգերը համերաշխության ձեռք պետք է մեկնեին իրար, թվում էր, թե այլևս Ղարաբաղի բարձունքներում չպիտի լսվեն գնդացիրների և թնդանոթների որոտը: Սակայն Ադրբեջանի նոր կառավարությունը, հեղափոխական կոմիտեն, հարազատորեն շարունակում է մուսավաթի քաղաքականությունը»,- գրում է «Յառաջ» թերթը:[46]

Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հեղկոմներ ստեղծվեցին Շուշիում, Կարյագինոյում, Ասկերանում և այլուր: Ապրիլի 29-ին Խոսրով բեկ Սուլթանովը ստեղծում է Ղարաբաղի միացյալ հեղկոմ և իրեն հռչակում դրա նախագահ:[47] Դրանով Ադրբեջանն ավելի սաստկացրեց իր զավթողական նկրտումները Ղարաբաղի նկատմամբ: Իր գոյության առաջին իսկ օրերից նա որդեգրեց Ղարաբաղին, Զանգեզուրին, Նախիջևանին տիրելու քաղաքականություն, որը, անշուշտ, խորհրդաքեմալական համաձայնության հետևանք էր: Նախատեսված էր, որ խորհրդային ուժերը, գրավելով Եվլախը, պետք է շարժվեին Շուշի՝ Ղարաբաղի վրայով միանալու

---

[44] Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920թթ., Եր., 2017, էջ 695:

[45] Ղարիբյան Ա., Ազատյան Ա., Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացման հիմնահարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», Եր., 2018, №1, էջ 67: Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 400: Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Т. 2, ч. 1. М., 2003, с. 51.

[46] «Յառաջ», 4 մայիսի, 1920:

[47] Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 236:

Տաճկաստանին (Թուրքիա):[48] Փաստորեն, Ղարաբաղի և Զանգեզուրի զավթումը և այդ տարածքների վրայով քեմալական Թուրքիայի հետ ցամաքային կապ հաստատելը Ադրբեջանի խորհրդայնացումից հետո խորհրդային ուժերի համար դարձել էին առաջնային հարց: Ուստի եթե մինչև Ադրբեջանի խորհրդայնացումը վերջինս վիճելի տարածքների համար պայքարում ստանում էր քեմալական Թուրքիայի աջակցությունը, ապա այժմ նրան պատրաստ էր աջակցել նաև Խորհրդային Ռուսաստանը: 1920 թ. մայիսի 1-ին Խորհրդային Ադրբեջանի արտաքին գործերի կոմիսարի օգնական Հուսեյնովը ՀՀ կառավարությանը ներկայացրեց մի վերջնագիր, որտեղ ասվում էր. «Ադրբեջանի Սովետական Հանրապետութեան բանուորա-գիւղացիական կառավարութիւնը, յանձինս յեղափոխական կոմիտէի, պահանջում է նախ՝ մաքրել ձեր զօրքերից Ղարաբաղի և Զանգեզուրի տերիտորիան, երկրորդ՝ յետ քաշուել ձեր սահմանները, և երրորդ՝ դադարեցնել ազգամիջեան կոտորածը: Հակառակ դէպքում Ադրբեջանեան սոցիալիստական և սովետական հանրապետութեան յեղափոխական կոմիտէն իրեն կը համարի պատերազմի դրութեան մէջ գտնուող Հայաստանի Հանրապետութեան հետ: Նոտայի պատասխանը պէտք է ստացւի 3 օրւայ ընթացքում»:[49] Իսկ թե ինչու վերջնագրում չէր հիշատակվում Նախիջևանի մասին, ապա պետք է նշել, որ դեռևս 1919 թ. կեսերից այն այլևս չէր ենթարկվում ՀՀ-ին, ուստի թուրքերը այդ հարցը համարում էին լուծված:[50]

ՀՀ արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանը նույն օրը հակադարձում է. «Ի պատասխան Ձեր մայիսի 1-ի նոտայի՝ հայտնում եմ, որ Ադրբեջանի տարածքում հայկական զորամասեր չեն եղել ու չկան: Ընդհակառակը, Ադրբեջանի բեկական և մուսավաթական կառավարության զորքերը գտնվում են վիճելի համարվող հայկական Ղարաբաղում և դեռ վերջերս այնտեղ կոտորում էին հայ բնակչությանը, հրկիզում գյուղերն ու քաղաքները: Ղարաբաղի բնակչությունը գյուղացիական դեպուտատների իր համագումարներում բազմիցս աներեր կամք է արտահայտել՝ չմտնել Ադրբեջանի կազմի մեջ, իսկ Ադրբեջանի զորքերը գտնվում են այդ մարզում հենց ինքնորոշվող ժողովրդի այդ կամքը կատարելու համար»:[51] Միաժամանակ, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և «Ադրբեջանի սահմաններում չունենալով զորք՝ ՀՀ կառավարությունը Ադրբեջանի նոր կառավարությանը խնդրում է զորքերը դուրս բերել հայկական Լեռնային Ղարաբաղի սահմաններից և հետո այդ մարզի շրջանում հանրաքվե անցկացնել ու վարվել նրա կամքի համաձայն: Խորհրդային Ռուսաստանի իշխանության հայտարարությունը՝ խաղաղ միջնորդի և վիճելի հարցերը լուծողի դեր ստանձնելու մասին, իհարկե, կողջունվի Ղարաբաղի տառապած ու արյունաքամ եղած հայ գյուղացիության կողմից: Հայաստանի կառավարությունը Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչներին առաջարկում է Ղարաբաղում իրավիճակը պարզելու համար այնտեղ ուղարկել մի չեզոք հանձնախումբ: Ելնելով վերը շարադրվածից, մեր կառավարությունը հարկ է համարում հայտարարել, որ տվյալ դեպքում վերջնագրային նոտայի համար ոչ մի հիմք չկա և լիակատար վստահություն է հայտնում, որ Խորհրդային Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը Լենինի, Խորհուրդների չորրորդ համառուսաստանյան համագումարի դեկրետով արդեն ընդունել է Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը, թույլ չի տա նոր բռնություններ գործադրել տարիներ շարունակ

[48] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 191; ց. 2, գ. 82, թթ. 1-3:
[49] «Բանուրի ձայն», Թիֆլիս, 9 մայիսի 1920, Нагорный Карабах в 1918-1923 гг. с. 445.
[50] Հակոբյան Ա., Արցախյան խնդիրը Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանում (1918-1920 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1999, № 1, էջ 95:
[51] Нагорный Карабах в 1918-1923 гг. с. 447-448.

արյունաքամ եղող աշխատավոր հայ ժողովրդի նկատմամբ»:[52] Հուսեյնովի վերջնագրի ժամկետը դեռ չէր լրացել, երբ մայիսի 1-ին ՀՀ կառավարությունը նույնանման բովանդակությամբ մի ռադիոհեռագիր էլ ստանում է Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի նախագահ Գ. Օրջոնիկիձեի և անդամներ Կիրովի, Մեխանոշինի և Լևանդովսկու ստորագրությամբ: Հեռագրում ասվում էր. «Հայաստանի և մեր բարեկամ դաշնակից Խորհրդային Ադրբէջանի սահմաններում շարունակւում են պատերազմական գործողութիւնները Հայաստանի և Ադրբէջանի միջև: Ռուսաստանի բանւորական գիւղացիական կառավարութիւնը իր սրբազան պարտքն է համարում իր ամբողջ ուժերով օգնութեան հասնել՝ Ադրբէջանի բոլոր աշխատաւորների անունից իրեն դիմող Ադրբէջանեան բանւորական գիւղացիական կառավարութեանը, հաստատելու այնտեղ բանւորական գիւղացիական իշխանութիւն: Ազգային ատելութեան հողի վրայ առաջ եկած պատերազմը Հայաստանի և Ադրբէջանի զօրքերի միջև, որը աւելի է բռնկւում Անգլիայի և Դաշնակցութեան ու Մուսաւաթի կուսակցութիւնների ագիտացիայով, ձեռնտու է միայն ճնշած ժողովուրդներին յաղթողներին ու Ադրբէջանի և Հայաստանի աշխատաւորութեանը կեղեքողներին:[53] Սահմանային բոլոր վիճելի խնդիրները Հայաստանի և Ադրբէջանի մէջ, կարող են լուծւել միայն ինքնորոշւած և աշխատաւոր ազգաբնակութեան կամքով: Սովետական Ադրբէջանը չի կարող թոյլ տալ և ոչ մի շովինիստական, ազգայնական և ագրեսիւ գործողութիւններ: Միջցեղային ատելութիւնը Սովետական Ադրբէջանում այլևս չի կարող տեղի ունենալ»: Ապա սպառնալիքի ձևով պահանջում. «ՌՍՖՍՀ անունից առաջարկում եմ ՀՀ կառավարութեանը անմիջապես դադարեցնել պատե բազմական ամեն գործողութիւնները Սովետական Ադրբէջանում և դուրս բերել իր զօրքերը նրա սահմաններից: Այդ պէտք է կատարւի 24 ժամւայ ընթացքում, այս առաջարկութիւնը ընդունելուց յետոյ: Այս առաջարկութեան չիրականացումը կընդունւի ՌՍՖՍՀ կողմից իբրև պատճառ պատերազմական գործողութիւնների: Այս առաջարկութիւնը կիրականանայ ռուսական կարմիր բանակի կողմից, իսկ ամբողջ պատասխանատվութիւնը այս բանում կընկնի հայոց կառավարութեան վրայ»: Միևնույն նպատակը հետապնդող այս երկու վերջնագրերը խորհրդահայ պատմագրության մեջ որակվել են որպես «ստահոդ հերյուրանքներ Սովետական Ադրբեջանի և բոլշևիկների հասցեին»,[54] իսկ ՀՀ կառավարության հաղորդագրությունը ադրբեջանական զորքերի կողմից Ղարաբաղում կատարված արյունահեղության մասին որակվել է որպես «հերյուրանքներով լի հաղորդագրություն»: [55]

Ղարաբաղում արդեն գիտեին Ադրբեջանի խորհրդայնացման մասին, բայց դեռևս տեղյակ չէին Խորհրդային Ադրբեջանի և կարմիր բանակի հրամանատարության կողմից ՀՀ կառավարությանը ներկայացված վերջնագրերին: Այս սպառնալիքներից հետո Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը կարմիր բանակի հրամանատարության հետ միասին անցնում է գործնական քայլերի: Ճշմարտությունը պահանջում է նշել, որ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները իրականում նույն մուսավաթականներն էին, ովքեր խորհրդային քողի տակ ձգտում էին հասնել իրենց վաղեմի ծրագրերի իրականացմանը:[56] Պետք է նշել, որ 1920 թ. մայիսի 3-ին ՀՀ պառլամենտի արտակարգ նիստում քննարկվեց Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների վերջնագրերի հետևանքով ստեղծված քաղաքական նոր

[52] Տե՛ս նույն տեղում:
[53] «Բանւորի ձայն», Թիֆլիս, 9 մայիսի, 1920:
[54] Մելքոնյան Ա., Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջ, Եր., 1965, էջ 114:
[55] Հովհաննիսյան Ա., Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը. Մայիսյան ապստամբությունը, Եր., 1923, էջ 20:
[56] Ղարիբյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թվականներին և Մեծ Բրիտանիան, Եր., 2012, էջ 154:

իրադրությունը: Զեկուցմամբ հանդես եկավ արտգործնախարար Հ. Օհանջանյանը: Նա, ներկայացնելով Ադրբեջանում վերջին շաբաթվա իրադարձությունները, նշեց, որ դրանք անմիջականորեն վերաբերում են հայոց կենսական շահերին: Այնուհետև նախարարը հայտնեց, որ նախքան Ադրբեջանի խորհրդայնացումը ՀՀ կառավարությունը դաշնակից պետությունների ներկայացուցիչներից ստացել էր մի վերջնագիր, որից պարզ էր դառնում, թե Ադրբեջանի նախկին վարիչները ինչպես են փորձել արդարացնելու իրենց թուլությունը հյուսիսային սահմաններում:[57] ՀՀ կառավարությունը դաշնակիցների այս նոտային պատասխանել է, թե ինքը երաշխավորում է, որ Հայաստանի կողմից ոչ մի հարձակում Ադրբեջանի վրա չի լինի: Օհանջանյանը հայտնում է, որ միջազգային օրենքներով նման վերջնագրերը կարելի էր համարել չընդունված, սակայն կառավարությունը պատասխանեց այդ երկուսին էլ, որպեսզի կասկած չառաջացնի, թե ՀՀ-ն նպատակ ունի բախումներ առաջացնել ՀՀ-ի և Ռուսաստանի կամ ՀՀ-ի ու Ադրբեջանի միջև: Խորհրդարանի արտակարգ նիստում Ալ. Խատիսյանն առաջարկում է երկրի ղեկը հանձնել պառլամենտի և Հայաստանի դեմոկրատների բացարձակ վստահությունը վայելող նոր կառավարությանը: Սրանով Խատիսյանի կառավարությունը հայտնում է իր հրաժարականի մասին, և խորհրդարանն ընտրում է նոր կառավարություն՝ Հ. Օհանջանյանի գլխավորությամբ:

Մայիսի 5-ին Դրոյի հետ բանակցելու համար Արցախ են ժամանում Օրջոնիկիձեի ներկայացուցիչներ Ս. Տեր-Գաբրիելյանն ու Լևանդովսկին և Դրոյից պահանջում զորքերը դուրս բերել Ղարաբաղից ու Զանգեզուրից: Նրանք փորձում են Դրոյին համոզել, որ մայիսի 2-ին Հայաստանը խորհրդայնացել է, և այլևս իմաստ չունի շարունակել պայքարը, բայց նա պատասխանում է, որ ինքը կկատարի միայն իր կառավարության հրամանը:[58] Դա չի բավարարում խորհրդա-ադրբեջանական բանագնացներին, ուստի նրանց զորքերը սկսում են առաջխաղացումը դեպի Ղարաբաղ: Հետզհետե գործնական հողի վրա էր դրվում Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը զենքով գրավելու ծրագիրը:

Նույն օրը 11-րդ կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի զորամասերը գրավեցին Աղստաֆան, Փոյլին և դուրս եկան Ղազախ, մայիսի 8-ին նվաճեցին Բարդան, մայիսի 9-ին՝ Աղդամը: Մայիսի կեսերին Գյանջայի շրջան սկսեցին ժամանել նաև 20-րդ դիվիզիայի զորամասերը:[59] Ղարաբաղի և Զանգեզուրի միջև ընկած թուրքական և քրդական տարածքների մուսուլմանական զինված բանդաները միավորվելով հայտարարեցին, թե իբր իրենք ևս կարմիր բանակի զորամասերից են: 1920 թ. մայիսի կեսերին 11-րդ կարմիր բանակը թուրք-քրդական գնդի հետ միասին մոտեցավ Լեռնային Ղարաբաղի սահմաններին: Տեղի հայ բոլշևիկները ձգտում էին հասնել երկրամասի խորհրդայնացմանը՝ կարծելով, թե ժողովուրդների ազատ ինքնորոշման կարգախոսներով առաջնորդվող Խորհրդային Ռուսաստանի բանակը Ղարաբաղի հայությանն օգնելու է ինքնորոշման հարցում: Մայիսի 20-ին խորհրդային իշխանության ներկայացուցիչները Դրոյից նորից պահանջում են զորքը դուրս բերել Ղարաբաղից, քանի որ Ռուսաստանը մտադիր էր այստեղ մտցնել կարմիր բանակի զորամասեր: Դրոյի ղեկավարած Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը մայիսի 22-ին գումարեց իր վերջին նիստը, որտեղ որոշվեց, որ դիմադրությունն այլևս անիմաստ է, ավելի լավ է հեռանալ Ղարաբաղից և թույլ տալ՝ այն դառնա Խորհրդային Ռուսաստանի, այլ ոչ թե Խորհրդային Ադրբեջանի մասը:

---

[57] «Յառաջ», 7 մայիսի, 1920:
[58] Գևորգյան Հ., Դրո, Եր., 2000, էջ 377-378:
[59] Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Եր., 2000, էջ 75:

Այս բախտորոշ օրերին՝ մայիսի 28-ին, Վարանդայի Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ Արցախի հայության վերջին՝ 10-րդ համագումարը: Պատգամավորները հիմնականում բոլշևիկներ էին: Համագումարը ողջունում է 11-րդ կարմիր բանակի մուտքը Արցախ և երկրամասը հայտարարում խորհրդային: Ստեղծվեց հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի գլխավորությամբ: Մինչև հունիսի վերջը հեղկոմներ ստեղծվեցին Լեռնային Ղարաբաղի գավառներում և գյուղերում: Այսպիսով, խորհրդա-քեմալական համագործակցության հետևանքով Ղարաբաղում հաստատվում են խորհրդային կարգեր, սակայն Ղարաբաղի հայության այն հույսերը, թե դա կնպաստեր մայր հայրենիքի հետ նրա վերամիավորվելուն, շուտով հօդս ցնդեցին: Ղարաբաղի խորհրդայնացմամբ ավարտվում է երկրամասի գոյապայքարի այս փուլը:

Ադրբեջանը նախկինի պես շարունակում էր հակահայկական քաղաքականություն վարել և, հանրապետության մուսուլմանաբնակ շրջաններին ոտքի հանելով, նպատակ ուներ շեղելու Հայաստանի կառավարության ուշադրությունը Ղարաբաղում ծավալվող իրադարձություններից: Այս անգամ նպատակակետ էին ընտրվել Կարսի մարզն ու Զանգիբասարը: Կարսի մարզի Զարիշատի, Աղբաբայի և Չըլդրի շրջաններում առկա էին հակահայկական տրամադրություններ: Հունվարին Ադրբեջանից եկած սպաներին հաջողվեց մարտական ջոկատներ ստեղծել և այդտեղից հանել հայ պաշտոնյաներին ու ոստիկանությանը: Սակայն Կարսի հայկական հրամանատարությունը արագ ու վճռական գործողություններ ձեռնարկեց, ինչի շնորհիվ փետրվարին մարեց խռովությունը: Զանգիբասարում կային շուրջ 15 թուրքաբնակ գյուղեր, որոնք ստեղծել էին «միլլի-շուրա» և հայտարարում էին, որ չեն ճանաչում Հայաստանի իշխանությունը: Բոլշևիկների 1920թ. մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո Հայաստանի կառավարությունը չէր կարող այլևս հանդուրժել հանրապետության տարածքում մուսուլմանաբնակ ապստամբ ու անհնազանդ շրջանների գոյությունը և որոշեց վճռական գործողություններով երկիրը մաքրել ամեն կարգի հակապետական ուժերից: Դա սկսվեց Զանգիբասարից: Հունիսի 19-ին հայկական ուժերը հարձակման անցան: Հունիսի 20-ին շրջանն արդեն մաքրվել էր ապստամբներից:

Քեմալաբոլշևիկյան համագործակցության արդյունքում Ադրբեջանի խորհրդայնացումից հետո վերջինս Խորհրդային Ռուսաստանի կողմից հայտարարվեց Արևելքում «հեղափոխության առաջամարտիկ», որտեղից բոլշևիկները «գրոհելու էին մենշևիկների և դաշնակցականների ազգային բուրժուական հակահեղափոխական կառավարությունների վրա»:[60] 1920թ. սեպտեմբերի 1-8-ը Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի կոմունիստ հայ պատվիրակները հանդես եկան խորհրդային հանրապետությունների օգնությամբ Հայաստանը խորհրդայնացնելու կոչով: Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին ծանր դրությունը 1920թ. նոյեմբերի կեսերին Հայաստանի ներքաղաքական կյանքում առաջ բերեց քաղաքական որոշ վերաձևումների անհրաժեշտություն: 1920թ. նոյեմբերի 29-ին «Հատուկ գնդի» ուղեկցությամբ ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի կողմից կազմավորված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն, բոլշևիկյան հայտնի գործիչ Սարգիս Կասյանի նախագահությամբ, Ադրբեջանից (Ղազախից) մտնում է Իջևան և «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ» երկիրը հռչակում խորհրդային հանրապետություն:[61] 1921թ. փետրվարի 25-ին կարմիր բանակի զորամասերը մտան Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս, մինչև մարտի կեսերը խորհրդային կարգեր հաստատվեցին ամբողջ Վրաստանում:

---

[60] Оржоникидзе Г.К., Избранные статьи, М., 1957, с.56.

[61] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1920թ. նոյեմբեր-1922թ. հունվար), Եր., 1974, էջ 27:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ Խորհրդային Ադրբեջանի Հեղկոմը, ելնելով որոշակի քաղաքական նկատառումներից, 1920թ. նոյեմբերի 30-ի իր հռչակագրով Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը հայտարարեց Խորհրդային Հայաստանի մաս: Սակայն մի քանի ամիս անց Ադրբեջանի ղեկավարությունը կատաղի պայքար սկսեց իր իսկ ընդունած հռչակագրի դեմ: 1921թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև «եղբայրության և բարեկամության» պայմանագիր, որով պատմական Հայաստանի տարածքներից Արևմտյան Հայաստանը, Սուրմալուի գավառը, Կարսի մարզը ճանաչվեցին Թուրքիայի տարածքներ, իսկ Նախիջևանը և Շարուրը տրվեցին Խորհրդային Ադրբեջանին:

Ռուսաստանը իր կարևորագույն խնդիրն էր համարում խորհրդային իշխանության ամրապնդումը, որին հասնելու համար անհրաժեշտ էր, բնականաբար, որ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի միջև լիներ սերտ համագործակցություն և հաստատվեր դաշնային փոխհարաբերություն: Երեք հանրապետությունները, սակայն, ունեին իրենց հուզող հարցերը և, բնականաբար, ձգտում էին հասնել այդ հարցերի լուծմանը: Հանրապետությունների միջև առկա վիճելի հարցերը և տարաձայնությունները հարթելու համար անհրաժեշտ էր ղեկավար մարմնի առկայություն: Մասնավորապես Վրաստանի խորհրդայնացումից հետո սկսվեցին երկրամասի միավորման նախապատրաստական աշխատանքները: 1921 թ. ապրիլի 11-ին Բաքվի խորհրդի ընդլայնված նիստը Ս. Օրջոնիկիձեի և Ս. Կիրովի զեկուցումներից հետո առաջին անգամ որոշում ընդունեց Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միավորման մասին: 1921 թ. ապրիլի 16-ին երեք հանրապետությունների միջև ստորագրվում է համաձայնագիր Անդրկովկասի երկաթուղիները միավորելու մասին: Հունիսի 2-ին նույնպիսի համաձայնագիր արտաքին առևտրի վերաբերյալ: 1921 թ. հուլիսի 3-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի միացյալ պլենումն ընդունեց «Վրաստանում և Անդրկովկասում կոմունիզմի հերթական խնդիրների մասին» բանաձևը, որտեղ նշված էր Անդրկովկասի հանրապետությունների կյանքում անկախության անցկացման անհրաժեշտության, փոխադարձ ռազմական և տնտեսական աջակցությունը հաշվի առնելով կամավորության սկզբունքներով՝ Ռուսաստանի հետ ռազմական, առևտրական և տնտեսա-ֆինանսական համաձայնագրի կնքման մասին: [62]

Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև գոյություն ունեցող տարածքային վեճերը հատուկ քննարկման առարկա դարձան 1921թ. կեսերին: Այդ նպատակով ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի 1921թ. մայիսի 2-ի որոշումով ստեղծվեց հանձնաժողով՝ Ս.Կիրովի (Ռուսաստանի ներկայացուցիչը Վրաստանում) նախագահությամբ և Անդրկովկասի հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ հանրապետությունների սահմանները որոշելու և ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումին եզրակացություն ներկայացնելու համար: Հանձնաժողովում Հայաստանը ներկայացնում էր արտգործժողկոմ Ա.Բեկզադյանը:

Հանձնաժողովի նիստերն ընթացան հունիսի 25-27-ը: Հունիսի 25-ին նիստն սկսվեց Ա.Բեկզադյանի ելույթով: Նա նախ ներկայացրեց Հայաստանի բացառիկ ծանր դրությունը, որի մեջ հայտնվել էր Մոսկվայի պայմանագրի պատճառով, որը նրան զրկել էր իր տարածքների կեսից և բնական ռեսուրսներից: Իսկ վերջին պատերազմը թողել էր 410 հազար գաղթականություն, որին հարկավոր էր բնակեցել և տալ հողաբաժին: Ըստ Ա.Բեկզադյանի՝ դրությունն այնպիսին էր, որ

[62] Մուրադյան Ն., Անդրկովկասյան դաշնության ստեղծումը և Հայաստանը, «Պատմություն և մշակույթ», Եր., 2016, էջ 312-313:

Հայաստանը՝ որպես ինքնուրույն քաղաքական միավոր, չէր կարող գոյատևել: Դրանից ելնելով՝ նա խիստ անհրաժեշտ էր համարում Ադրբեջանից և Վրաստանից հայկական որոշ տարածքներ Հայաստանին միացնելը: Այդ տեսակետի հետ, ինչպես հայտնում էր Ա.Բեկզադյանը, լիովին համաձայնվել էր Ի. Ստալինը, երբ նրա հետ Մոսկվայում տեսակցել էին ինքն ու Ա.Մյասնիկյանը: Առաջարկվում էր դա կատարել հայահոծ բնակության շրջաններում «հանուն ընդհանուր համերաշխության և մեկընդմիշտ ամենաանկեղծ ու բարեկամական փոխհարաբերությունների հաստատման»: Խոսքը վերաբերում էր հիմնականում Ախալքալաքի գավառին և Լեռնային Ղարաբաղին:

Վրաստանի պատվիրակությունը «քաղաքական նկատառումներով» լրիվ մերժեց «տարածքային կտրումների» սկզբունքը և Ախալքալաքի գավառի համար առաջարկեց ընդունել status quo: Ավելին՝ իր հերթին նա պահանջ ներկայացրեց Լոռու նախկին չեզոք գոտու մի մասի նկատմամբ: Հանձնաժողովի նախագահ Ս.Կիրովը պաշտպանեց վրացիներին «տարածքային կտրումների» անթույլատրելիության հարցում:[63]

Ադրբեջանի պատվիրակությունը նույնպես առարկեց Ալ.Բեկզադյանին՝ հայտարարելով, թե երբևէ չի լսել, որ Լեռնային Ղարաբաղը պետք է թողնել Հայաստանին, որ այդ հարցի համար ինքը Բաքվից որևէ ցուցում չի ստացել, և առաջարկեց հարցը քննարկել հաջորդ օրվա նիստում խոստանալով Բաքվից մինչ այդ ստանալ համապատասխան հրահանգներ ու ցուցումներ: Առաջարկն ընդունվեց: Հունիսի 26-ի նիստում քննարկվեց վրաց-ադրբեջանական, ապա հայ-ադրբեջանական սահմանային վեճերի հարցը: Ադրբեջանի պատվիրակությունը հայտարարեց, թե Բաքվից դեռևս պատասխան չունի, ուստի հարցը շարունակում է մնալ բաց: Ստեղծված իրադրության մեջ Ա.Բեկզադյանն առաջարկեց դադարեցնել հանձնաժողովի աշխատանքը և սահմանների մասին բոլոր հարցերը քննարկել առաջիկայում կայանալիք Անդրկովկասյան կոնֆերանսում, որը, սակայն, մերժվեց:

Հաջորդ և վերջին նիստը կայացավ հունիսի 27-ին: Հանձնաժողովը վերադարձավ հայ-վրացական վեճին: Վրացիներն առաջարկեցին հանրաքվե անցկացնել ամբողջ չեզոք գոտում՝ այն դեպքում, երբ նախորդ օրը նրանք դա ընդունում էին գոտու միայն մի մասի համար: Ա.Բեկզադյանը խստորեն առարկեց դրան և հրաժարվեց նման մթնոլորտում շարունակել բանակցությունները՝ առաջարկելով վիճելի հարցերը քննարկել ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյում:

Մինչ այդ՝ հունիսի 26-ին, Գ.Օրջոնիկիձեն և Ս.Կիրովը, Ն.Նարիմանովին հեռագիր ուղարկեցին՝ նշելով, թե Զանգեզուրի իրադրության պայմաններում բանակցությունների ընթացքն ընդմիջելը թողնում է խիստ աննպաստ տպավորություն, ուստի խնդրվում էր Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյում և ժողկոմխորհում լուծել Ղարաբաղի մասին հարցն այնպես, որ հնարավոր լինի բանակցություններն ավարտել հունիսի 27-ին: Միաժամանակ Գ.Օրջոնիկիձեն և Ս.Կիրովը տեղյակ էին պահում իրենց կարծիքի մասին, այն է՝ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծել այն սկզբունքով, որ ոչ մի հայկական գյուղ չմիացվի Ադրբեջանին, և, հակառակը, ոչ մի մուսուլմանական գյուղ չմիացվի Հայաստանին:

Ադրբեջանի ղեկավար մարմինների ակնարկվող որոշումը կայացվեց հունիսի 27-ին և չհասավ Ս.Կիրովի հանձնաժողովին: Այդ որոշմամբ անընդունելի համարվեց Ա.Բեկզադյանի առաջարկած ձևով Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումն ամբողջությամբ՝ «դեպի Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի անվերապահ տնտեսական կապվածության պատճառով, որպիսի իմաստով

[63] Հայոց պատմություն, Հ.4: Գիրք I, Եր., 2010, էջ 357:

և պետք է լուծվի այդ հարցը»: Գ.Օրջոնիկիձեի և Ս.Կիրովի կարծիքը ևս մերժվեց «վարչական ու տնտեսական տեսակետից»: Հարցի միակ լուծումը կարող էր լինել, ըստ Ադրբեջանի, «հայ և մուսուլման զանգվածների լայն ներգրավումը խորհրդային շինարարության մեջ (ինչպես երևում է ընկ. Ն.Նարիմանովի հռչակագրից)»:[64]

Անդրկովկասի երեք խորհրդային հանրապետությունների միջև սահմանային հարցերը լուծելու նպատակով 1921-ի հուլիսի 2-7-ը Թիֆլիսում հրավիրվեց ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի նիստ: Հուլիսի 4-ի նիստում քվեարկությամբ որոշվեց Լեռնային Ղարաբաղը (ԼՂ) միացնել ՀՍԽՀ-ին: Որոշմանը դեմ արտահայտվեց Ն. Նարիմանովը՝ պահանջելով հարցի վերջնական լուծումը փոխադրել Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ կենտկոմ, սպառնալով, թե Բաքվում կարող է հեղաշրջում լինի: Հաջորդ օրը հրավիրվեց Կովբյուրոյի պլենումի արտահերթ նիստը նոր կազմով և առանց քվեարկության որոշվեց. «…Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի ՍԽՀ սահմաններում՝ նրան տալով մարգային լայն ինքնավարություն՝ Շուշի կենտրոնով»: ՀԿ(բ)Կ կենտկոմը 1921թ. հուլիսի 16-ի նիստում սխալ և անբավարար է ճանաչեց այդ որոշումը և բողոքեց դրա դեմ: 1923թ. հուլիսի 7-ին՝ Խորհրդային Ադրբեջանի Կենտգործկոմի դեկրետով ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: 1924թ. փետրվարի 9-ին Ադրբեջանի կազմում ստեղծվեց Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը:

[64] Нагорный Карабах в 1918-1923гг., с.640-644.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր ուսումնասիրությունների արդյունքում կատարված եզրակացությունների հանրագումարը կարող ենք ամփոփել հետևյալ կետերի մեջ.

- 1918-1921թթ. հայության ազատագրական պայքարի հիմքում էր հայկական պետականության քաղաքակրթական արժեհամակարգից բխող Հայոց միասնական Հայրենիքի գաղափարը:
- 1918թ. սկզբներին ընթացող թուրք-թաթարական տարաբնույթ և համաձայնեցված գործողությունները Արևելյան Անդրկովկասում, Թիֆլիս-Բաքու երկաթուղու շրջանում, Երևանի նահանգում, հանգեցրին այս փուլի գլխավոր հանգուցակետին՝ Բաքվի գրավման ծրագրին: Ձևավորվեցին երկու հակամարտող ճամբարները՝ թուրք-թաթարական և հայ-ռուսական, այն էլ առանց ռուսաստանյան պետության ուղղակի միջամտության: Այս առճակատումն ընդգրկեց մի կողմից՝ ազգամիջյան բախման, մյուս կողմից՝ իշխանության հիմնահարցերը: Ընդհարումները Բաքվի նահանգի և Բաքու քաղաքի հայ ազգաբնակչության համար վերածվեցին ընդգծված ինքնապաշտպանության, ազգապահպանման գործընթացի:
- Պանթուրքիզմի համատեքստում նորույթը թերևս այն էր, պանթուրքիստական ուժերին էին միացել նաև վրացիները, ինչը ոչ թե պատահական համագործակցության դրվագ էր, այլ հետևողական վրացական-թաթարական և վրացական-թուրքական համագործակցության արդյունք, որոնք Բաքվի դեմ մղվող արշավանքին աջակցում էին Անդրկովկասի իշխանության՝ Սեյմի ու Կոմիսարիատի մակարդակով:
- 1918թ. մարտյան իրադարձությունները մուսավաթական խռովության արդյունք են: Այն նպատակ ուներ Բաքվում տապալել ժողովրդավարական խորհրդի իշխանությունը, գրավել քաղաքը և այն հռչակել թաթարական արհեստածին հանրապետության կենտրոն: Եվ քանի որ երկրամասի գլխավոր նավթարդյունաբերական կենտրոնում իշխող էր հայկական տարրի և ազգային կազմակերպությունների ու հաստատությունների ազդեցությունը, ուստի այդ իշխանության և Բաքվի համար պայքարը վերածվեց Բաքվի և նահանգի հայազգաբնակչության գոյապայքարի:
- «Ադրբեջան» կոչված արհեստածին կազմավորումը բացարձակապես օտար երևույթ էր մերձկասպյան տափաստաններում, և նրա այսպես կոչված կայացումը համաթուրանական արյունարբու ծրագրով կապվում էր տարածքային բռնազավթումների հետ:
- Հայաստանի Հանրապետությունը վճռականորեն պաշտպանել է Արցախի՝ Հայաստանի անբաժան մասը լինելու ճշմարտությունը և իրողությունը:
- Բաթումում Հայաստանի անկախությունը թուրքերը ճանաչեցին միանգամայն անորոշ տարածքների վրա, անկախ նրանից, որ Բաթումի պայմանագրով մատնանշվեց Անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև սահմանագիծը:
- Բյուրո-կառավարության գործունեության շրջանում առկա է եղել ավելի նեղ սահմաններով Հայաստանի պահանջին նպատակաուղղված քաղաքական մտածողություն:
- 1918 թ. երկրորդ կեսին Անդրկովկասում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքները, փաստենք, որ չնայած նորահայտ Ադրբեջանի գործադրած միջոցներին, նրան չի հաջողվում հայկական Ղարաբաղը ենթարկել իր գերիշխանությանը:
- ՀՀ կառավարությունը, Արցախ-Ղարաբաղի և Սյունիք-Զանգեզուրի խնդրում փորձում էր ապավինել 1919թ. հունվարի՝ Փարիզում հրավիրված Խաղաղության վեհաժողովի այսպես կոչված արդարամիտ վճիռներին, ըստ այդմ էլ ամեն ինչ անում՝ խուսափելու համար հարցի լուծման

ուժային եղանակներից, մինչդեռ Ադրբեջանը անտեսելով վերոնշյալ գործոնները, առաջնորդվում էր կոնկրետ իրավիճակից բխող գործողություններով և ամեն տեսակի դավերով ու սադրանքներով փորձում իրեն ենթարկեցնել Ղարաբաղը և Զանգեզուրը՝ այդ երկրամասերը հիմնավորապես հայաթափ անելով:

- Միջազգային պաշտոնական ոլորտները չէին գտնվում մարդկային և քաղաքակրթական այն բարձրության վրա, որ իրենց սեփական շահերը մի կողմ թողնեին և արդարացի քաղաքականություն իրականացնեին Արևմտյան Հայաստանի, Արցախի, Նախիջևանի և Ջավախքի՝ Հայոց ամբողջական Հայրենիքի անբաժան մասերի նկատմամբ:
- Անհերքելի փաստերը միանշանակ ապացուցում են, որ 1918-1920 թթ. Ղարաբաղի բնակչությունը չէր ճանաչում ադրբեջանական պետության իշխանությունը: Ղարաբաղի հայերի ազատ ինքնորոշման ձգտումը և հայկական պետության սահմաններում վերամիավորվելու նրանց կամքը դրսևորվեցին անձնազոհ ազգային-ազատագրական պայքարում և իրավաբանորեն հաստատված են նրա ներկայացուցչական մարմինների որոշումներում:
- 1920թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագրով ՀՀ-ից փաստորեն անջատվում էին Ղարաբաղը, Զանգեզուրը և Շահթախթից հարավ ամբողջ Նախիջևանը և այդ բնիկ հայկական տարածքները հայտարարվեցին այսպես կոչված «վիճելի տարածքներ»:
- Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված սահմանները նախորոշված են եղել, բայց դրա ստորագրումը բոլշևիկները ցանկացել են իրականացնել նախկին իշխանության պատվիրակության ձեռքով՝ պատասխանատվությունը գցելով նրա վրա:
- Հայաստանի տարածքային ու սահմանային խնդիրների լուծման հարցում ՀՀ կառավարությունը ոչ միշտ էր անհրաժեշտ նախաձեռնություններ հանդես բերում և հաճախ հանդես էր գալիս պասսիվ դիտորդի դերում:
- ՀՀ ղեկավարությունն առանձին դեպքերում թերագնահատեց Թուրքիայի քաղաքական ու ռազմական ակնկալիքները և դրան հակառակ գերագնահատեց մեր երկրի նշանակությունը եվրոպական երկրների համար:
- Ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի տարբեր ուղղությունների ներկայացուցիչներից ձևավորված պատվիրակությունները հաճախ պատշաճ հետևողականություն և անհրաժեշտ դիվանագիտական հմտություններ չեն ցուցաբերել Հայաստանի տարածքներին ու սահմաններին առնչվող բանակցություններում:
- Հայաստանի Հանրապետությանն իր տարածքային ու սահմանային խնդիրների լուծման հարցում մեծապես խանգարում էր ինչպես դաշնակից երկրների երկդիմի քաղաքականությունն, այնպես էլ մեր անմիջական հարևանների՝ Վրաստանի ու Ադրբեջանի մեղմ ասած հակահայկական մոտեցումներն ու քայլերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Սկզբնաղբյուրներ /փաստաթղթեր, արխիվային նյութերի ժողովածուներ/

1. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.), կազմողներ՝ Ջ.Կիրակոսյան, Ռ.Գ.Սահակյան, Երևան, 1972:
2. Նախիջևան-Շարուրը 1918-1921թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, №1-2:
3. Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, т.1, М., 2008.
4. Казанджян Р., К предистории самоопределения Нагорного Карабаха. С приложением новых документов, М., 1997.
5. Шесть лет национальной политики Советской власти и Наркомнац, 1917-1923гг., М., 1924.

Բ. Մենագրություններ

6. Աբրահամյան Հ., Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Էջմիածին, 2009:
7. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, Գիրք Ա, Բ, Երևան, 2003, 2005:
8. Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրության գործում (1917-1921թթ.), Երևան, 1966:
9. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:
10. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
11. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973:
12. Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002:
13. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999:
14. Գանգրունի Հ., Հայաստան 1920-1921 եւ միջազգային դիւանագիտութիւնը, Պէյրութ, 1986:
15. Գիւլխանդանեան Ա., Բագուն Հայաստանի անկախութեան եւ նորա պահպանման տէսակետից (Մայիս 28. 1918-1938 քսանամեակ), Փարիզ, 1938:
16. Գևորգյան Հ., Դրո, Երևան, 2000:
17. Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Երևան, 1991:
18. Դաղայան Խ., Հայերը և Բաքուն (1850-ական-1920թթ.), Երևան, 2006:
19. Եսայան Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965:
20. Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010:
21. Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922թթ., Երևան, 1979:
22. Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները 1920-1922թթ., Երևան, 1985:
23. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920թթ. (պատմական ակնարկ), Երևան, 2008:
24. Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999:
25. Իրազէկ Յ., Մօտիկ անցեալից: Պատմական դէպքեր եւ ապրումներ. 1917-1922, Պէյրութ, 1956:

26. Լազեան Գ., Հայաստան եւ Հայ դատը: Հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, 1957:
27. Լալայան Ա., Զանգեզուրյան դրվագներ (1917-1921թթ.), Երևան, 1985:
28. Լէօ, Սահմանավեճեր: Լոռի,Ախալքալաք, Ղարաբաղ, Թիֆլիս, 1919:
29. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան (հոդվածների ժողովածու), Երևան, 2007:
30. Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., Երևան, 2007:
31. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968:
32. Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002:
33. Կնյազյան Դ., Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920թթ., Երևան, 2008:
34. Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010:
35. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., կազմողներ՝ Ս.Միրզոյան, Ա.Ղազիյան, խմբագիր՝ Ա.Վիրաբյան, Երևան, 2000:
36. Հայ ժողովրդի պատմություն (ՀԽՍՀ ԳԱ հրատ.), հ.7, 8, Երևան, 1967, 1970:
37. Հայոց պատմության հարցեր (հոդվածների ժողովածու), №2-17, Երևան, 2001-2016:
38. Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2012:
39. Հայոց պատմություն, Հ.4: Գիրք I, Երևան, 2010:
40. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996:
41. Հովհաննիսյան Ա., Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը. Մայիսյան ապստամբությունը, Երևան,1923:
42. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ.I. Առաջին տարին, 1918-1919, Երևան, 2005:
43. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Երևան, 2006:
44. Ղարիբյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թվականներին և Մեծ Բրիտանիան, Երևան, 2012:
45. Ղուլյան Յու., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից. 1918-1920թթ., Երևան, 2009:
46. Մելքոնյան Ա., Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջ, Երևան, 1965:
47. Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003:
48. Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923թթ., Պէյրութ, 1994:
49. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920թթ.), Երևան, 2006:
50. Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ., Երևան, 2002:
51. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը (1920-1921թթ.), Երևան, 2000:
52. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920թթ., Երևան, 2017:
53. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
54. Վիրաբյան Վ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918 -1921 թթ., Երևան, 2016:
55. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928, Պէյրութ, 1958, Երևան, 1993:
56. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքար, Երևան, 1994:
57. Քաջազնունի Հ., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

58. Авалов З., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг. Воспоминания. Очерки. Париж, 1924.
59. Асоян Т., Территориальные проблемы Республики Армении и британская политика (1918-1920гг.), Москва, 2005.
60. Борьба за победу Советской власти в Азербайджане. 1918-1920, Баку, 1967.
61. Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, Москва-Ленинград, ч.1-2, 1928-1929.
62. Жордания Н.Н., За два года (с 1 марта 1917-го-по 1 марта 1919-го). Доклады и речи. Тифлис, 1919.
63. Жордания Н.Н., Моя жизнь. Стэнфорд, 1968.
64. К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925, Баку, 1989.
65. Махмурян Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920гг., Бремя белого человека, Ереван, 2002.
66. Мустафазаде Р., Две республики. Азербайджано-российские отношения 1918-1920гг. М., 2006.
67. Нагорный Карабах в 1918-1923гг., отв. ред. В.А.Микаелян, Ер., 1992.
68. Оржоникидзе Г.К., Избранные статьи, Москва, 1957.
69. Galichian R., The Invention of History, London-Yerevan, 2009.
70. Swietochowski T., Russian Azerbaijan. 1905-1920. Cambridge University Press, 2004.

Գ. Պարբերականներ

71. «Արև», Բաքու:
72. «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան:
73. «Բանվորի ձայն», Թիֆլիս:
74. «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան:
75. «Յառաջ», Թիֆլիս:
76. «Հորիզոն», Թիֆլիս:
77. «Պատմա-բանասիրական հանդես», Երևան:
78. «Պատմություն և մշակույթ», Երևան:
79. «21-րդ դար», Երևան: